կան դասակարգի մը, որ էր «պճղնաւոր ազնուականութիւն»ը, Տեքարթի մտածումը՝ ընդհակառակն՝ կը համարի թէ արտայայտութիւնն ըլլայ այսպէս կոչուած պետական «երրորդ կարգ»ին, որ էր՝ տակաւ բարձրացող քաղքենիութիւնը: Կարելի է համակարծիք ըլլալ կամ ոչ՝ Կոլտմանի այս մեկնաբանութեան հետ. բայց պէտք է ընդունիլ անոր սա արժանիքը՝ որ Կոլտման չ'իյնար ժամանակավրէպ մերձեցումներու մէջ, յիշեալ իմաստասէրներուն վերագրելով մարքսական կամ «նախամարքսեան» տեսութիւններ, ինչպէս փորձուած են ընդհակառակն ընել՝ այլեւայլ ուղղութիւններու ուրիշ պատմաբաններ:

Կը խորհինք թէ տակաւին շատ ճամբայ կայ կտրելիք՝ զետեղելու համար, ըստ կարելւոյն, առարկայական հիմքերու վրայ հայ իմաստասիրական մտածումին զարգացումը: Նաեւ դժուար է ըսել, առ այժմ, թէ արդեօք կա՞յ հոն եւ թէ ի՛նչ չափով «ստեղծարար» չունչ մը: Ինչ որ ալ ըլլայ, սակայն, յայտնի է որ այդ ստեղծարար չունչը չի համեմատուիր, մնալու համար հին աշխարհի շրջապատին մէջ, յոյն կամ հռոմէական փիլիսոփայութեան հետ: Այս չի նշանակեր, ի հարկէ, թէ անցեալի հայ իմաստասիրական միտքը զուրկ եղած ըլլայ նշանակութենէ եւ արժէքէ: Երբեք բաւականաչափ պիտի չկրկնենք վիթխարի Պատմահօր իմաստութեան պատգամը՝ «թէպէտ եւ եմք ածու փոքր» եւլն.:

Ինչ որ կը կոչուի «յունաբան» դպրոց, եւ զոր ԺԹ. դարու լեզուական ռոմանթիզմը միակողմանիօրէն ստորագնահատած է՝ լեզուական «ոսկեդար»ու ծայրայեղ պաշտամունքէն մղուած, իրականին մէջ մեծդի, նշանակալից երեւոյթ է՝ իր թերի կողմերով հանդերձ: Զ. դարու ընթացքին լրիւ կերտուած է արդէն՝ յունարէնի «գիտարուեստական» կատարելութեամբ՝ իմաստասիրական–գիտական լեզու մը, որ ոչ միայն ողնածուծը կը կազմէ, դեռ այսօր իսկ, մեր գիտական հայերէնին, այլ նաեւ կատարելագոյն օրինակը կ'ընծայէր, յետ յունարէնի, գիտարուեստական–դպրոցական ճշգրտութեան, բովանդակ միջերկրականեան–միջին–արեւելեան աշխարհին մէջ, երբ տակաւին գոյութիւն իսկ չունէր գրաւոր արաբերէնը եւ «դպրոցական» լատիներէնը հազիւ կը սկսէր ձեւանալ: Զեմ կարծեր թէ կը սխալինք՝ եթէ ըսենք որ հելլենաբան դպրոցի իմաստասիրական արտադրութիւնը, յունարէնէն վերջ, լեզուականօրէն ամէնէն յառաջացած արտայայտութիւնը կը կազմէ իմաստասիրական դրութենական մտածումի մը, յատկապէս Արիստոտէլի եւ Պորփիւրի նման ուժգնօրէն դրութենական իմաստասէրներու թարգմանութեամբ:

Հայ մշակոյթի պատմութեան մէջ իմաստասիրական մտածումին ուսումնասիրութիւնը յղի է տակաւին նորանոր զարգացումներու:

ԽՄԲ.

ԲՆԱԳՐԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

TEXTES ET ETUDES

© National Library of Armenia

ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(ԱԿՆԱՐԿ)

Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի հռչակը տարածւում է հայոց գրերի գիւտին յաջորդող մտաւոր զարթօնքի ժամանակներում, երբ կենսագործւում էր մեսրոպատառ առաջին պատուիրանը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Դաւիթ Անյաղթը, որ մէկն էր մաշտոցեան պլրոցի հոգեւոր ժառանգներից, ընտրեց իմաստասիրութեան ասպարէզը, խորացաւ նրա հիմքերի մէջ, որոշեց նրա սահմաններն ու օրէնքները, պաշտպանեց իմաստասիրութիւնը կասկածամիտ հակառակորդներից եւ հաստատեց՝ որ «գոյ իմաստասիրութիւն» եւ որ նրա նպատակը, խնդիրն է՝ ճանաչել իրերի աշխարհը, առաջնորդել մարդկութեանը անգիտութիւնից դէպի գիտութիւն, տարածել լոյս ու ճշմարտութիւն...: Դաւիթ Անյաղթի ճըշմարիտ ուսմունքը վճռական դեր կատարեց հայոց միջնադարեան գիտութեան ու արուեստի զրեթէ բոլոր ճիւղերի զարգացման համար: Այդ ուսմունքի ցոլքերը ներթափանցեցին նաեւ գեղարուեստական գրականութեան ոլորտները:

Գաղափարական վերափոխութեան, գիտութեան, կեանքի ճանաչողութեան ձգտումը միջնադարեան գեղարուեստական գրականութեան, յատկապէս բանաստեղծութեան մէջ, առաջին հերթին արտայայտւում է բանականութեանը տրուող դերով: Իրական, առարկայական, եւ վերացական, երկնային աշխարհազգացողութիւնները միացնող բանականութիւնը, որոշակի բաղադրութեամբ, հիմնականում միջնորդուած եղանակով, դրսեւորւում է նաեւ հոգեւոր բանաստեղծութեան մէջ:

© National Library of Armenia

Դա միջնադարեան հայ բանաստեղծութեան բնորոշ գիծն է առհասարակ։ Մ. Աբեղեանը հանդամանօրէն վերլուծելով Յովհ. Սարկաւագի «Բան իմաստասիրական» քերթուածը, զարգացնում է այն հայեացքը, թէ հեղինակն այդ բանաստեղծութեամբ դրսեւորում է նոր եւ պարզ այն ձգտումը, որ եղել է «դէպի բնութիւն եւ ռացիոնալիզմ կրօնի մէջ, որով դլխաւոր նշանակութիւնը տրւում էր ոչ թէ յայտնութեանը, այլ բնութեան դիտողականութիւնից բանականութեամբ» ձեռք բերուած ճշմարտութիւններին[1]։ Կարելի է նշել, որ նման երեւոյթ ինչ-ինչ չափերով – յայտնութեան գաղափարին համատեղ – նշմարւում է նաեւ հայոց հոգեւոր բանաստեղծութեան մէջ, նրա զարգացման առաջին շրջանից ի վեր։ Այստեղ այլաբանական նշանակութիւն տրւում է ո՛չ թէ կամ ոչ միայն բնութեան դիտողականութիւնից ձեռք բերուած ճշմարտութիւններին, այլ նաեւ հասարակական յարաբերութիւնների, հայ ժողովրդի, հայ եկեղեցու կրօնա-ազգային կացութեան, կեանքի դիտողականութիւնից ձեռք բերուած իրողութիւններին։ Այսօրինակ իրողութիւնների հանդիպում ենք հոգեւոր երգերի, շարականների մէջ, Յովհաննէս Սարկաւագից առաջ եւ դա հէնց՝ բանականութեան արտայայտութիւնն է կրօնի մէջ։ Յովհան Մանդակունու թարգմանիչներին նուիրուած շարականներում, Կոմիտաս Կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» եւ Սահակադուխտի Վահան Գողթնացուն նուիրուած սքանչելի երգերում, ինչպէս նաեւ ապաշխարութեան, մեղքի եւ ողջման բաղմաթիւ շարականներում, ներքնապէս իշխում են նաեւ բանականութիւնը, մարդու իրական յոյզն ու զգացողութիւնը։ Իսկ Ժ. դարում կրօնի մէջ բանականութեան ուժի գեղագիտական ըմբռնման հզօր արտայայտութիւնը եղաւ Գրիգոր Նարեկացու քնարերգութիւնը։

Նարեկացու «Մատեան Ողբերգութեան»ը Ե–Ժ դարերի հայոց հոգեւոր երգերում պարփակուած կենսազգացողութեան, կրօնա-ազգային, կրօնա-քաղաքական, հասարակական մտայնութեան հանճարեղ ընդհանրացումն է՝ քրիստոնէական աշխարհայեցողութեան դրոշմով, քրիստոնէական հումանիզմի դիրքերից։ Հէնց այստեղ է ձեւաւորւում Դաւիթ Անյաղթի «աստուածանմանութեան» («կատարեալ իմաստասէրը նման է Աստուծու», «նմանութիւն Աստուծոյ ըստ կարողութեան մարդկան») տեսութեան աստուածաբանական-մարդաբանական եւ գեղագիտական-իմացական ըմբռնումը բանաստեղծութեան մէջ։ Այս ըմբռնումը չօշափելի է դառնում՝ ամենակատարեալի օրինակով մարդուն կատարելութեան հասցնելու անհուն բաղձանքով, «անկատար հոգւոց ի կատարեալ դիտութիւն ածելոյ» (Դաւիթ

1. ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆ, Հայոց հին գրականութեան պատմութիւն, հտ. Բ, Երեւան, 1946, վերտպ.՝ Երկեր, հտ. Դ, Երեւան, 1970, էջ 82։

Անյաղթ), տառապող բանական էակի «ի խորոց սրտից խօսք» ասելու (Նարեկացի) անզուսպ պահանջմունքով.

«Իսկ դու՝ ո՛վ անձն իմ եղկելի,
սահման բանաւոր եւ տունկ կենդանի՝
եւ ոչ ի ժամու իւրում պտղաւոր...»[2]։

Եւ ահա, կարծես թէ հայոց փիլիսոփայութիւնից հայոց քնարերգութեան է փոխանցւում մարդու, բանական էակի աստուածանմանութեան խնդիրը, մարդու կատարելութեան հարցը։ Դաւիթ Անյաղթը սահմանում է, թէ ինչպիսին պէտք է լինի մարդը. Նարեկացին ողբում է, թէ ինչպիսին չէ մարդը. «Քանզի եթէ ոչ էր մարդ-կային սեռն, ամենայն անկատար գոյր», վասնզի մարդն ստեղծուած է «վասն զարդարելոյ զզգալիսս»[3] (զգալի աշխարհը, կեանքը զարդարելու համար), գրում է Անյաղթը։ Այս նոյն մարդն, ահա, կանգնած է Նարեկացու քնարերգութեան կենտրոնում՝ ներհակ դրութեամբ՝ «սահման բանաւոր եւ տունկ կենդանի», բայց «ոչ ի ժամու իւրում պտղաւոր»՝ մարդու անզօրութիւնն ազդարարող դառն ճշմարտութեան ցաւագին խոստովանութեամբ.

«Եւ զի՞րդ ասացից անձին իմում մարդ՝
գրեալս ընդ անմարդիս,
եւ ի՞բր անուանեցայց բանական՝
անբանիցն յիմարութեան կցորդեալ,
եւ ո՞րպէս կոչեցայց տեսանողական՝
մթացուցեալ զլոյսս որ յիս,
եւ ընդէ՞ր համբաւեցայց զգայական՝
զիմաստիցս դրունս փակեալ...»[4]։

Ի՞նչպէս ես ինքս ինձ մարդ ճանաչեմ, երբ տմարդիների շարքում եմ կանգնած, ի՞նչպէս ես ինձ բանական կոչեմ, երբ անբանների կը-ցորդն եմ դարձել – հառաչում է հանճարեղ բանաստեղծը։ Եւ ահա մարդ-բանականին կատարելութեան է առաջնորդում՝ մի դէպքում ողջամիտ իմաստասէր – դիտնականը, միւս դէպքում՝ ողջամիտ իմաստասէր–բանաստեղծը։ Երկուսն էլ անչափելիօրէն հզօր բանականութեամբ, կենսաճանաչողութեամբ եւ հումանիզմով։ Թւում է, թէ

2. Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք, Մատեան Ողբերգութեան, Թ, բ, Վենետիկ, 1840, էջ 21։
3. ԴԱՒԻԹ ԱՆՑԱՂԹ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահաւաք քննական բնագրերը եւ առաջաբանը՝ Ս. Ս. Արեւշատեանի, Երեւան, 1980. Սահմանք իմաստասիրութեան, էջ 30։
4. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, ԻԱ, դ, էջ 50։

© National Library of Armenia

Նարեկացու «Մատեանը» Դ. Անյաղթի փիլիսոփայութեան բարոյա-գիտական ըմբռնումների ու սահմանների՝ բանաստեղծութեան հանճարեղ համադրութիւնն է, դիւթիչ, ողբահառաչ, իմացաբանական համայնապարփակ քնարերգութիւն, որ երբեւէ ծնել է հայոց կեանքը: Պատմական ի՞նչ հիմքեր կան այս մտահայեցքի համար:

Նկատելի է, որ դաւթեան եւ նարեկացիական աշխարհայեցողութեան մի շարք կենսական գծեր ունեն պատմական մտածողութեան ընդհանուր աղբիւր, ընդհանուր յենք: «Նարեկացին ապրում էր մի այնպիսի ժամանակի – նկատում է Գ. Աբգարեանը, «Ցաւութեան տաղ»ի վերծանութեան առիթով –, երբ իշխում էր Եկեղեցու հայրերը՝ Երանոս Լիոնացու, Կղեմէս Աղեքսանդրացու, Աթանաս Աղեքսանդրացու, Գրիգոր Աստուածաբանի, Գրիգոր Նիւսացու «աստուածայնացման» գաղափարն այն մասին, թէ "Աստուած մարդացաւ՝ որպէսզի մարդն աստուածանայ": Սկսած չորրորդ դարից աստուածայնացման գաղափարը հանդիսացել է քրիստոնեայ Արեւելքի կրոնական կեանքի քուն կորիզը, որի շուրջն են պտտուել դաւանաբանական, բարոյագիտական եւ խորհրդաշղթայական բոլոր հարցերը... Այսպէս է մտածել ամբողջ միջնադարում համայն քրիստոնէական աշխարհը եւ այդպէս է մտածել, բնականաբար, նաեւ Նարեկացին»[5]:

Գ. Աբգարեանի այս ընդհանրացումը ընդունելի է. այն բացայայտում է Նարեկացու քնարական փիլիսոփայութեան մի հիմնական կողմը: Երկրորդ կարեւոր պատմական հանգամանքը, ահա՛, այն է, որ վաղ միջնադարից ի վեր, հայոց գրերի հանճարեղ գիւտից յետոյ, Անյաղթից մինչեւ Նարեկացի, Հայաստանում պարարտ հող էր ստեղծւում նաեւ հին յունական փիլիսոփայութեան, յատկապէս նորպլատոնական ճանաչողական եւ արիստոտէլեան էակաբանական ուսմունքների իւրացման ու զարգացման համար: Նոյն դարերում, քրիստոնեայ Հայրերի աղդեցութեան շրջանակի հետ մէկտեղ, զուգահեռաբար, դաւթեան հիմունքներով ընդլայնւում էր նաեւ հին աշխարհի գիտութեան ու փիլիսոփայութեան աղդեցութեան շրջանակը: Նարեկացին այն հանճարն էր, որ չէր կարող չնկատել եւ չհամատեղել կենսական երկու տարբեր գործօնները, չմիահիւսել քրիստոնեայ Հայրերի աստուածայնացման հայեցքը դաւթեան աստուածանմանութեան հայեցքի հետ: «Դաւթի փիլիսոփայութեան ակունքները – գրում է Ս. Արեւշատեանը – գտնւում էին հելլենական աշխարհում. այդ աշխարհի բազմաթիւ գաղափարներ, Դաւթի կողմից մուծուելով հայկական միջավայր, այստեղ գտան համապատասխան հող եւ միահիւսուեցին յաղթանակած քրիստոնէական գաղափարների

5. ԳԷՈՐԳ ԱՐԳԱՐԵԱՆ, Վերծանութիւն Գրիգոր Նարեկացու «Ցաւութեան տաղ»ի, «Էջմիածին», ԼԱ (1974), Բ, էջ 43:

հետ»[6] (ընդգծումը մերն է – Շ. Ն.): Նարեկացու կապը Անյաղթի հետ որոշւում է, ահա, պատմական այս երկու շրջադծերի մէջ: Մէջբերենք մարդու կատարելութեան հարցի հետ կապուած Անյաղթի եւ Նարեկացու հայեացքների միահիւսութեան մի քանի կէտեր եւս, փարատելու համար հնարաւոր տարակուսանքներն այս խնդրում: Ըստ Դաւթի «Փիլիսոփայութեան առաջնահերթ ու ամենամօտիկ նպատակն է – գրում է դարձեալ Ս. Արեւշատեանը – մաքրել մարդկային հոգին եւ մեռցնել արատաւոր կրքերը: Դա Աստծուն նմանուելու համար անհրաժեշտ ... է: Կատարեալ փիլիսոփան ըստ Դաւթի, փրօք, նման է Աստծուն: Բարութիւնը, իմաստութիւնը եւ հզօրութիւնը, ահա՛, այն հիմնական յատկանիշները՝ որոնք փիլիսոփային նմանեցնում են Աստծուն, որովհետեւ այդ յատկութիւնները, որոնք կազմում են Աստծոյ կերպարը, նաեւ կատարեալ փիլիսոփայի յատկանիշներն են»[7]: Դրանք նաեւ Նարեկացու քնարական հերոսի խառնուածքի որոշիչ գծերն են, «Մատեանի» իմացաբանութեան շարժիչ լծակները: Դատողաբար, ողջմտօրէն, բանականօրէն նայիր քո շուրջը, ճանաչիր արտաքին աշխարհը, ճանաչիր ինքդ քեզ, որոշիր քո տեղը հասարակութեան մէջ[8]. այս հայեացքներն են ընդհանուր կապ ստեղծում դաւթեան ուսմունքի եւ Նարեկացու քնարական փիլիսոփայութեան միջեւ: Բանական էակի դերը կեանքում պէտք է գտնուի իրերի, աշխարհի, կեանքի ճանաչողութեան ճանապարհով – այս է Նարեկացու քնարական հերոսի պահանջը: Եւ ահա մարդու մտքի, բանականութեան, նրա զգացութիւնների եւ իմացութիւնների, ճանաչողական եւ կենդանական յատկութիւնների, մարդկային ամէն տեսակ յարաբերութիւնների, բարքերի եւ առաքինութիւնների իրաւատեսքննիչն ու հանճարեղ հոգեբանը բացատրում, մեկնաբանում ու գնահատում է կեանքը՝ ժամանակի մէջ, ներկան՝ էգոյուրկ, անցեալը՝ անհատատատ, անորոշ, գալիքն՝ անատոյգ, անտեսանելի, իսկ որոգայթն՝ աներեւոյթ, դիմածածուկ, յարատեւ, մշտակենցաղ.

«Մանաւանդ զի որոգայթն գաղտնի եւ հնարագիրն աներեւակի,
տարր ժամանակիս յանէից,
անցեալն անյայտ եւ ապառնին կարծողական»[9]:

Հակառակ բեւեռից՝ բանաստեղծական անիմանալի, աստուածային երեւակայութեամբ ու ներշնչանքով, ողբերգաբար, հառաչանքների ուղեկցութեամբ, մարդու կատարելութեան նոյն բաղձանքն

6. Ս. Ս. ԱՐԵՒՇԱՏԵԱՆ, Դաւիթ Անյաղթ, աշխ. թարգմ., Առաջաբան, Երեւան, 1980, էջ 8–9:
7. Ս. ԱՐԵՒՇԱՏԵԱՆ, Դաւիթ Անյաղթ, «Գարուն», 1979, թ. 11, էջ 72:
8. Նոյն տեղում:
9. ԳՐ. ՆԱՐԵԿԱՑԻ, Ողբերգութիւն, ԾԵ, գ, էջ 141:

© National Library of Armenia

է յայտնուում, անգիտութիւնից գիտութիւն, ինքնամոռացումից ինքնաճանաչման բերելու նոյն Անյաղթեան գաղափարն է բարձրացուում, մատուցուում. «Իմաստասիրութիւն յաղագս հոգւոյ եղանի – գրում է Դաւիթ Անյաղթը –, քանզի զհոգւոյ աչս կալեալս ի մարմնական հեշտախառութեանցն եւ խաւարեալս՝ ի ձեռն իմաստասիրութեան յարուցանել եւ լուսաւորել բնաւորեցաւ հոգի: Արդ, որչափ պատուականագոյն է հոգի քան զմարմին, նոյնպէս եւ որ զհոգի զարդարէ իմաստասիրութիւն՝ պատուականագոյն է քան զայլ արհեստս մարմնոյ զարդարողս»[10]: Փիլիսոփայութիւնը, ըստ հանճարեղ Դաւթի, գործնականօրէն զբաղւում է հոգու, մտքի առաքինութեան, վեհ, գեղեցիկ գաղափարների պաշտպանութեամբ, նախապատուութիւնն է տալիս հոգուն եւ ոչ մարմնին. փիլիսոփայութիւնը արթնացնում, լուսաւորում է մարդու միտքը, բացում է մարմնական ցանկութիւններով պատած ու մթագնած նրա աչքերը, փիլիսոփայութիւնը գեղեցկացնում է հոգու մղումները, կանխում է մարմնի վտանգաւոր ցանկութիւնները: Հէնց այս է նաեւ Նարեկացու «Մատեան»ի բարոյագիտութեան հարցերի հարցը: Գիտութիւնը, փիլիսոփայութիւնը, կեանքը, բնութիւնը, բանական մարդուն, մտածող, խօսող էակին շնորհում, մատուցում, հրամցնում են այդ ամէնը. բայց ահա մարդը գործում է այդ ամէնին ներհակ, ընդդիմադիր, ինքն իր դէմ.

«Այլ ոմն ձիս խօսնական կարծրերակս սանձակոտոր արձակերասան,
յովանակս անհամբոյր վայրենական եւ անկրթական...:
Մարդս մոլեղնական տարագրական եւ կորստական,
մանուկս մեղանչական անխրատական եւ վարատական,
տնտեսս մահապարտական տարտամական եւ անգործնական,
բանականս անասնական դաղանական եւ անմաքրական:...
մարմինս հոգւոյս իմ թախծողական դատողական եւ տանջողական,
խոցեալս անբժշկական անխնամական եւ անկանգնական...»[11]:

Բնութեամբ բանական լինելով՝ անասնական բարք ու վարք ունեմ – հառաչում է բանաստեղծը –, անբանների թերութիւններն եմ կրում եւ ոչ նրանց առաւելութիւնները: Ողբալի սահման–մարմին, որ տունն է հոգուս, նրա ծառան լինելու փոխարէն, եղաւ նրա տըրտմեցուցիչը, տանջողը, դատիչը[12]: Եւ ահա, մարդուն, բարձրագոյն գոյին, բանական էակին ապականութիւնից զերծ պահելու, դէպի անդունդը գահավիժելու վտանգից ազատելու համար Նարեկացին

10. Դ. ԱՆՅԱՂԹ, Երկասիրութիւնք, Սահմանք, էջ 102:
11. ԳՐ. ՆԱՐԵԿԱՑԻ, Ողբերգութիւն, ԻԲ, բ, էջ 51:
12. Հմմտ. Հ. Գ. ԱԻԵՏԻՔԵԱՆ, Նարեկ աղօթից, բանաւոր եւ զգուշաւոր լուծմամբք բացատրեալ (Նարեկլուծ), Վենետիկ, 1827, էջ 100:

զարգացնում է «աստուածանմանութեան» դաւթեան տեսութիւնը: Անմահ փիլիսոփայի «Իմաստասիրութիւն է նմանութիւն Աստուծոյ ըստ կարողութեան մարդկան» (որը գալիս է Պղատոնից) բանաձեւը դառնում է Նարեկացու «Ողբերգութեան» հանդուցային հարցը, դառնում է դարաշրջային մի երեւոյթ հայոց բանաստեղծութեան մէջ: Նարեկացի–գեղագէտը իր հանճարի ուժով զգալի արտայայտութիւն է տալիս անձնական, ամենակատարեալ գոյի՝ Աստծու նմանութեամբ կատարելութեան հասնելու գաղափարին (Դ. Անյաղթ), մինչ մարդացած Աստծոյ՝ Քրիստոսի օրինակով է որ (Նարեկացի) մարդ–բանականը, նիւթական գոն, կատարելութեան պիտի հասնի: Այս ձգտումը իրականութիւն պիտի դառնայ, ինչպէս նկատեցինք, կեանքը ճանաչելու, ըմբռնելու, հասկնալու միջոցով, մարդու ինքնահաստատման, ինքնաճանաչման ճանապարհով՝ «բարութեամբ, հզորութեամբ, իմաստութեամբ», «ճանաչիր քեզ», «ոչինչ չափից աւելի» ճշմարիտ փիլիսոփայական բանաձեւերը առաջնորդ ունենալով:

Երկու հանճարների բարոյագիտական հայեացքների ընդհանրութիւնները բնականոն են, օրինաչափ, անխուսափելի...: Նարեկացին, քաջածանօթ՝ Դաւիթ Անյաղթի փիլիսոփայական աշխատութիւններին, համակուել է նրա ուսմունքի ճանաչողական գաղափարներով եւ իր «Ողբերգութեան» մէջ իւրովի բարձրացրել այդ գաղափարները: Զափազանց ուշադրաւ ու հաճելի է նման մի տեսակէտի գոյութեան փաստը Հ. Գ. Աւետիքեանի «Նարեկ աղօթից» նշանաւոր մեկնութեան էջերում, որի վրայ մեր ուշադրութիւնը բեւեռեց նարեկացիագէտ Պ. Խաչատրեանը: «Եւ զիա՞րդ ասացից անձին իմում մարդ» սկսուածքով՝ ԻԱ գլխի գ. հատուածի մեկնութեան մէջ Գ. Աւետիքեանը գրում է. «Մտաց ընդունական: Է մասն սահմանի մարդոյն՝ ըստ աւանդելոյ նախնեաց, որք սահմանէին զմարդ՝ կենդանի բանաւոր, մտաց եւ հանճարոյ ընդունական. այսինքն ունող կամ ընդունող մտաւորութեանց իմաստից: Մեղօք իմովք կորուսի ասէ՝ որ ինչ է յիս բանական կամ զգայական. անբանից յիմարութեան նմանեցայ»[13]: «Ըստ աւանդելոյ նախնեաց» ասելով՝ Աւետիքեանը նկատի ունի Դաւիթ Անյաղթի «Սահմանքի» յայտնի այն բանաձեւը, որ մէջ է բերում նոյնութեամբ:

Առաւել ուշադրաւ եւ որոշակի է Ս. Արեւշատեանի հայեացքն այս առթիւ. դրանք միասին հիմնաւորում են մեր հարցադրումը. «Այսպիսով – նկատում է անյաղթագէտը – Նարեկացու միստիցիզմը քրիստոնէական վարդապետութեամբ չարունակում էր նոր–պլատոնականութեան դաղափարներից մէկը, համաձայն որի մարդն իր հոգեկան եւ մտաւոր կարողութիւններով պէտք է ձգտէր նմանուել

13. Հ. Գ. ԱԻԵՏԻՔԵԱՆ, Նարեկլուծ, էջ 98:

1852-82

© National Library of Armenia

ու մերձենալ Աստծուն, որպէսզի կարողանար ձուլուել նրա հետ։ Նոր-պլատոնականութեան այդ գաղափարը, որ բաւականաչափ յըստակ դրսեւորուել է Դաւիթ Անյաղթի մօտ, ազդել է միջնադարի միւս միստիկական ուսմունքների վրայ»[14]։

Այս դիտումները եւ այլ էական շատ հարցեր, որոնց անհրաժեշտօրէն կ'անդրադառնան նարեկացիագէտները, անմիջական աղերսներ են ստեղծում Դ. Անյաղթի եւ Նարեկացու միջեւ։ Իմացաբանական, ճանաչողական այս հարցերը տարբեր չափերով եւ տարբեր արտայայտչական եղանակներով դրսեւորուում են միջնադարեան ողջ քնարերգութեան մէջ, ներառեալ ԺԸ դարը։

ԺԱ-ԺԴ դարերում, հայոց մտաւոր վերածննդի այդ շրջանում, դիտութեան, արուեստի, գրականութեան, լեզուի աշխարհականացման աստիճանական եւ ապա բուռն զարգացման ընթացքի մէջ բացայայտուում, ընդլայնուում են բանականութեան, հոգու, մտքի եւ մարմնի, մարդու զգայական կրքերի, վնասակար ցանկութիւնների հարցերի շուրջ Դաւիթ Անյաղթի եւ Նարեկացու ընդհանուր հայեացքների ազդեցութեան շրջածները.

«Գոյ յիս դիտութիւն,
Բայց խամրացեալ է.
Գոյ երկիւղ քարեաց,
Այլ չիջանի միշտ։
Է՛ յիս եւ հոգի,
Բայց տկարացեալ է.
Ունիմ եւ լոյս պայծառ,
Բայց խաւարեալ է»[15]։

Թւում է, թէ Գրիգոր Տղան միաժամանակ վերարծարծում եւ համատեղում է Անյաղթի գիտափիլիսոփայական ճանաչողական այն դրոյթը, թէ՝ «Գոյ յիս դիտութիւն» (բայց խամրացեալ է) եւ Նարեկացու «Ողբերգութեան» այն հանդուցային կէտը, թէ՝ «Է յիս եւ հոգի, բայց տկարացեալ է», երկուստեք դիտելով իբրեւ իր ժամանակի հայոց վիճակի բնորոշ եւ անհանգստացնող կողմերը։

Նոյն այդ դարերում (ԺԱ-ԺԴ) հայոց գեղարուեստական գրականութեան ոլորտներում խոյանում է նաեւ Դաւիթ Անյաղթի կերպարը. հանճարեղ իմաստասէրի կեանքն ու գործը, նրա մեծ վաստակը, նրա անունն ու հռչակը անմիջականօրէն ներգործում են հայ

14. Ս. Ս. ԱՐԵՒՇԱՏԵԱՆ, Փիլիսոփայութիւն, «Հայ ժողովրդի պատմութիւն», Գ. հատ., ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1976, էջ 334-335։

15. ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ, Բանաստեղծութիւններ եւ պոէմներ, աշխատասիրութեամբ Ա. Մնացականեանի, Երեւան, 1972, էջ 179-180։

ժողովրդի գրական-ստեղծագործական մտքի վրայ եւ երեւան են գալիս նաեւ անուանապէս նրան նուիրուած երկեր։

Դաւիթ Անյաղթի շուրջ ստեղծուած գրական-աւանդական զրոյցների բազմազանութիւնը, ԺԱ-ԺԱ դարերից ի վեր հայ մատենագիտութեան ընձեռած պատմական, իրական փաստերն ու տեղեկութիւնները թոյլ են տալիս կարծելու, որ Դաւիթ Անյաղթին նուիրուած գրական երկերն են ստեղծուել նրա հանճարի առաջին փայլատակումների շրջանից ի վեր, մինչեւ ԺԱ-ԺԲ դարերը, որոնք, դժբախտաբար, մեզ չեն հասել։ Միջին դարերի գրաւոր աղբիւրներից յայտնի փաստերի համադրութիւնը, հազարաւոր գրչագրերի մանրաղնին ուսումնասիրութիւնը, գրական թէ աւանդական զրոյցների, բնագրերի գիտական համեմատութիւնները, ինչպէս նաեւ օտար աղբիւրների համապատասխան նիւթերի համաձայն քննութիւնը եւ այլն, անշուշտ, նոր լոյս կը սփռեն այս խնդրի վրայ։ Այս ճանապարհով կը լրացուի, կ'ամրողջացուի Դ. Անյաղթի ստեղծագործական կեանքի, գիտական կենսագրութեան պատմութիւնը։

ԺԲ-ԺԴ դարերից մեզ հասել են Դ. Անյաղթի կեանքի ու գործունէութեան հետ կապուած է՛ւ արձակ է՛ւ չափածոյ երկեր, գրական զրոյցներ եւ բանաստեղծութիւններ։

Մեծ մտածողին նուիրուած բանաստեղծական առաջին տողերին մենք հանդիպում ենք ԺԱ-ԺԲ դարերի մոռացուած բանաստեղծ Վարդան Հայկազնի պատմա-քնարական, կենսագրական մի պոէմում՝ «Տաղ դերեզմանական», որը նա գրել է 1105 թուականին Գրիգոր Վկայասէրի մահուան առիթով։ Բանաստեղծը ողբում է ժամանակի նշանաւոր գործչի մահը եւ հառաչում, որ չկան այլեւս անցեալ դարերի հանճարները, որ կարողանային իրենց արուեստի հզօր ուժով ներկայացնել Գրիգոր Վկայասէրի անմահ փառքն ու մեծութիւնը, սերունդներին յանձնել հայոց կեանքի պատմութեան տխուր էջերը.

«Մովսէս պիտէր Խորենացի
Քերթողահայրըն կենդանի.
Իմաստութեամբն անչափելի,
Զերդ հոգեւոր տուն եւ տեղի...»[16]։

Շնորհալի բանաստեղծը հպարտութեամբ ու խորին ակնածանքով մտաբերում է Մ. Խորենացուն, Դ. Անյաղթին, նրանց ընկերակիցներին, որոնք իմաստասիրական հանդէսներում իրենց «հզօր բա-

16. «Բազմավէպ», ԼԱ (1873), էջ 264։ Զերդ նա հոգեւոր... ընթերցումն ունէ վերջին տողը հրատարակութեան մէջ, ի հարկէ վրիպակաւ. հմմտ. Հ. Գ. ՋԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ, Հայկական հին դպրութեան պատմութիւն, հտ. Ա, Վենետիկ, 1897, էջ 316, ուր մէջբերում են նոյն տողերը առանց նա դերանուան։

© National Library of Armenia

նիւք» առասպելական յաղթանակներ են տարել՝ զարմանք եւ հիացմունք յարուցելով ամէնքի մէջ...: Ձկան, այլեւս չեն ծնւում նրանց արժանի յաջորդներ, ժառանգորդներ: Թախծում է բանաստեղծը.

«Կամ յընկերացն իւր նաղելի
Բանիւք հզօրքն ի հանդիսի,
Յորոց անուանցն էին յահի
Ցունաց ճարտարքն եւ յերկիւղի:
Չէին կարող կալ ի դիմի
Կամ բան մի տալ պատասխանի...
Այլ նոքա չեն ատ ի միջի...
Յաջորդ չըկայ եւ չերեւի
Ոչ ժառանգորդ մեծն արուեստի:
Սրահքն աւեր ճեմարանի
Ճեմողքն անհետ չեն ի միջի.
Հիմքն խըլած վարժանոցի
Աթոռ չըկայ վարդապետի.
Վարժեարքն եղեն այպն ու գերի
Դատարկացած յամենայնի»[17]:

Ժամանակագրական առումով մեզ յայտնի երկրորդ բանաստեղծը, որ երգեր է նուիրել Դ. Անյաղթին՝ Ն. Շնորհալին է: Նրա «Դաւիթ» խորագրով չափածոյ հանելուկը, առաջին ամբողջական փոքրիկ բանաստեղծութիւնն է, ուր արտայայտւում է ժողովրդի պաշտամունքն իր իմաստուն զաւակի նկատմամբ.

«Իմաստասէր մի՝ յԱթենաց
'Ի էր ի յազգէն Հայոց Մեծաց,
Խոսրովային ճառ մի ասաց,
Զոր երեսս շատ վարդապետաց»[18]:

Դ. Անյաղթի՝ մրցոյթներում տարած յաղթանակների վերաբերեալ Վարդան Հայկազնի «Բանիւք հզօրքն ի հանդիսի, Յորոց անուանցն էին յահի Ցունաց ճարտարքն եւ յերկիւղի», Ն. Շնորհալու «Խոսրովային ճառ մի ասաց, Զոր երեսս շատ վարդապետաց», եւ նման շատ տողերի համար, որ կը տեսնենք նաեւ այլ բանաստեղծութիւններում, հաւանաբար հիմք են ծառայել ժողովրդի մէջ տարածուած համապատասխան ղրոյցներ: Այդ երգերի հեղինակները ի նկատի ունեն տրամաբանութեան հարցերի շուրջ Մ. Խորենացու, Դ. Անյաղթի եւ յոյն փիլիսոփայ Մելիտոսի վիճաբանութիւնը, Խորենացու եւ Անյաղթի՝ Երուսաղէմի պատրիարք Յորնաղի (Ե. դար) հետ սուր վէճերը, Աթէնքի հրապարակում տեղի ունեցած իմաստասիրական մրցոյթը եւ այլն, որոնց մէջ, ըստ աւանդապատմական փաստերի, միշտ յաղթող են եղել Մ. Խորենացին եւ Դ. Անյաղթը: «Խոսրովային ճառ» հասկացութիւնը կապւում է «Խոսրովային այն բուրդերի» հետ, որ հնում կառուցուել են Ցունաստանի քաղաքներում՝ յատուկ իմաստասիրական մրցոյթների համար: Դ. Անյաղթին նուիրուած ղրոյցներից մէկում ենք հանդիպում նման արտայայտութեան: Երբ Թէոդոս կայսրը Մ. Խորենացուն եւ Դ. Անյաղթին առաջարկում է Կարին քաղաքի շինութեան ղեկավարման գործը, նրանք բաղում ճարտարապետական հնարամիտ կառոյցների, պաշտպանողական ամրութիւնների հետ միասին կառուցում են նաեւ «խոսրովային բուրգ». «... իսկ Դաւիթ եւ Մովսէս, որպէս զարս քաջս անդադար սկիզբն արարին շինել զքաղաքն Կարնոյ: ... Կանգնեցին բուրգն խոսրովային»[19]: Ն. Շնորհալին առաջին նշանաւոր բանաստեղծ–գործիչն է, որ յատուկ ուսումնասիրութեան առարկայ է դարձնում Դ. Անյաղթի գրական ժառանգութիւնը, գնահատում, բարձրացնում նրա փիլիսոփայութեան քարոյագիտական սկզբունքները: «Շարադրութիւն հոմերական վիպասանութեան սակս Հայկազանցն սեռի եւ Արշակունեացն զարմի» պոէմում, որը հայ ժողովրդի պատմութեան բանաստեղծական առաջին ամբողջական շարադրանքն է, Ն. Շնորհալին առանձին տեղ է յատկացնում հայոց թարգմանիչներին, խորն զգացումով վերյիշում է իր հայրենի երկրի իմաստասիրութեան առաջին սերմնացաններին՝ Մ. Մաշտոցին եւ նրա աշակերտներին, որոնք Աթէնքում իրենց երկնային շնորհներով ու գիտութեամբ գերազանցում էին յոյն իմաստասէրներին.

«Մանկունս ուշեղքս ժողովեալ,
Նոր դըպրութեամբ այնու վարժեալ.
Որք թարգմանիչք Հոգւովն եղեալ, ...
Յաթենացւոց քաղաքն երթեալ,
Զիմաստութեան ծաղիկս առեալ. ...

17· «Բազմավէպ», նոյն տեղում, էջ 264–265: Դ. Անյաղթին նուիրուած այս տողերը առաջին անգամ նկատում է հայագէտ Գ. Զարբհանալեանը (նշ. աշխ.):

18· Ա. Ս. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Հայ միջնադարեան հանելուկներ (V-XVIII դդ.), Երեւան, 1980, էջ 247–248: «Խոսրովային ճառը» ճարտասանական, հռետորական արուեստի բոլոր կանոններով համեմուած իմացական խօսքն է: «Խոսրովային» նշանակում է նաեւ «կատարեալ եղանակ երաժշտութեան» կամ «անուն երաժշտական եղանակի». բացատրւում է նաեւ, որ իբր հնում եղել է Խոսրով անունով նշանաւոր մի երաժիշտ, որի հետ է կապւում եւ «խոսրովային» հասկացութիւնը: Այս մասին հանգամանօրէն տես Ն. Կ. ԹԱՀՄԻԶԵԱՆ, Ներսէս Շնորհալին երգահան եւ երաժիշտ, Երեւան, 1973, էջ 23–24:

19· Ա. ՂԱՆԱԼԱՆԵԱՆ, Աւանդապատում, Երեւան, 1969, էջ 159:

© National Library of Armenia

Այս է Մովսէս Դաւթիւ եղեալ,
Եւ Մամբրէիւ այլք հետեւեալ,
Այնքան շնորհօք վերին լցեալ,
Մինչ զի Ցունաց գերազանցեալ»[20]:

Յայտնի է նաեւ, որ Ն. Շնորհալին մեծ վարպետութեամբ չափաբերել է Դ. Անյաղթի վերագրուած «Բարձրացուցէք» ներբողը: «Դրա վերջին մասը – նկատում է Մ. Աբեղեանը – ջերմ հաւատով ասուած մի մեծ օրհներգութիւն է՝ քանաստեղծի սիրած ութ վանկանի տողերով ու փոփոխութիւններով»[21]: Դաւթեան ուսմունքի առաւել խորն քանաստեղծական արձագանգների հանդիպում ենք ԺԳ. դարի երկրորդ կէսի եւ ԺԴ. դարի առաջին քառորդի նշանաւոր գործիչ Մովսէս Երզնկացու մօտ: Նա գրել է Դ. Անյաղթին նուիրուած երկու ընդարձակ քանաստեղծութիւն: Այս երգերով՝ անուանի մատենագէտ, խրատագիր, ուսուցիչ եւ գրիչ Մովսէս Երզնկացին ճանաչւում է նաեւ իբրեւ քանաստեղծ-փիլիսոփայ: Մինչ այս, Մ. Երզնկացին իբրեւ քանաստեղծ, մատենագրութեանը յայտնի է իր ուսուցչի՝ բաբունապետ Գէորգ Սկեւռացուն նուիրած իր ողբով, որ գրել է 1301 թուականին նրա մահուան առիթով.

«Աւա՜ղ իմոյս թշուառութեան,
Անմխիթար սրգոյս դիպման:
Ողբաղձալին իմ կորուսի
Զբարբունապետն գովելի»[22]:

Դաւթին նուիրուած Մ. Երզնկացու վերոյիշեալ քանաստեղծութիւնները մեզ յայտնի են «Գիրք սահմանաց»ի ուշ շրջանի ընդօրինակութիւնների հետ միասին: Առաջինը՝ «Մերոյ ազգիս դիտապետի»[23] սկսուածքով քանաստեղծութիւնն է՝ ութ վանկանի, մէկ հատածով, նոյնայանգ, քառատող տներով՝ «Մովսէսի աշակերտի չափեալ լինի» տնակապով, իսկ երկրորդը՝ «Մեծ հռետորն հայոց ազգի» սկզբնատողով, նոյն չափի ու յանգի 39 տնանոց անտիպ քանաստեղծութիւն է եւ ունի՝ «Մովսէսի աշակերտի Գէորգայ վարդապետի տաղ կոչի» տնակապը: Այս եւ այլ փաստերով տուդապէս լուծւում է այդ քանաստեղծութիւնների հեղինակի հարցը: Գէորգ

20. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 580–581:
21. Մ. ԱԲԵՂԵԱՆ, նոյն տեղում, էջ 115:
22. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 104:
23. Այս քանաստեղծութեան մասին սես նաեւ՝ Ներսէս Շնորհալի (Ցոդուածների ժողովածու), Երեւան, 1977, էջ 74–75: Ցետագայում այն տպագրում է Ա. Գ. Մաղոյեանը: Տես նրա Դաւիթ Անյաղթը եւ Ն. Շնորհալի յօդուածը՝ «Դաւիթ Անյաղթ» (Ցոդուածների ժողովածու), Երեւան, 1980, էջ 139–142:

Սկեւռացու աշակերտ Մ. Երզնկացին՝ ի պատիւ «գովելի» բաբունապետին, իրեն կոչում է նաեւ «Աշակերտ Գէորգայ վարդապետի» կամ՝ «Մովսէս աշակերտ»: Դ. Անյաղթին նուիրուած այս քանաստեղծութիւնները բաւականաչափ պատկերացում են տալիս ԺԲ–ԺԴ դարերում հայկական դպրոցներում գիտութեան, փիլիսոփայութեան, քառեակ արուեստների դասաւանդման դրութեան, ուսումնակրթական ընդհանուր շարժման, եւ այդ շարժման մէջ յատկապէս Դ. Անյաղթի ուսմունքի ունեցած գործնական դերի մասին: Մ. Երզնկացին այս քանաստեղծութեան մէջ երախտագիտութեամբ է յիշում Դ. Անյաղթի երկերի առաջին մեկնիչ Ն. Շնորհալու ծառայութիւնները, նրան՝ իբրեւ «հայոց ազգի պարծանք» Դ. Անյաղթի ուսմունքի ջատագովի ու տարածողի.

«Մերոյ ազգիս դիտապետի,
Եւ համանուն իմոյ ծնողի,
Որոյ Ներսէս անուն կոչի,
Եղբայր մեծին Գրիգորի.
Որ ի խնդրոյ արանց բարի,
Մեկնեալ զառած մեծին Դաւթի,
Ճոխ եւ Անյաղթ հռետորի
Եւ պարծանաց հայոց ազգի»[24]:

Մ. Երզնկացին ժամանակի հայ երիտասարդութեան, պատանեկութեան ուշադրութիւնը բեւեռում է Դ. Անյաղթի փիլիսոփայութեան ամենաէական կողմի՝ բարոյագիտութեան վրայ: «Ամենայն չար տանջելի», «Է չարն ապականացու», «չարն ոչ է անեղ», «չարն ոչ է գոյացութիւն»[25]: Դ. Անյաղթի տեսական խորախորհուրդ այս բանաձեւերը, որոնց համար հիմք է հանդիսացել հին փիլիսոփայութիւնը եւ որ հայ մատենագիտութեանը մասամբ ծանօթ էին արդէն Եղնիկ Կողբացուց – «չիք ինչ չար որ բնութեամբ չար իցէ. եւ ոչ է արարիչ չարաց իրաց, այլ բարեաց»[26] –, փիլիսոփայութիւնից ուղիղ գծով անցնում են քնարերգութեան շրջանակները՝ Մ. Երզնկացու վերոյիշեալ քանաստեղծութեան միջոցով:

«Է ամենայն չար տանջելի,
— Ասէ — գիտեա, դո՛ւ պատանի,
Զի որ չարին հետեւեցի,
Ի տանջանաց ոչ զերծանի:

24. Մատենադարան, ձեռ. թ. 5073, թերթ 255ա:
25. ԴԱՒԹԻ ԱՆՑԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1932, էջ 121:
26. ԵՂՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, Եղծ Աղանդոց, Գ. տպ., Վենետիկ, 1926, էջ 12:

© National Library of Armenia

Տեսեալ իմա՛, եղբայր բարի,
Զպարգեւս մերոյս նըւազ ազգի,
Որ յարարչէն յամենայնի,
Միայն մարդոյս տըւեալ լինի»[27]:

Երկրորդ բանաստեղծութիւնը, որ դարձեալ պատմա-քնարական եւ առաւել ծաւալուն մի ստեղծագործութիւն է, ուշադրաւ է Դ. Անյաղթի կեանքի եւ գործունէութեան վերաբերեալ ծանօթ եւ անծանօթ փաստերով: Բանաստեղծը գծում է մեծ իմաստասէրի՝ հայրենիքից Յունաստան, Յունաստանից հայրենիք կեանքի ուղին, դնահատում նրա ստեղծագործական երկունքի արժէքները, մեկնում նրա իմաստասիրական դրոյթներն ու դաղափարները.

«Մեծ հրեատոն հայոց ազգի,
Որոյ Անյաղթ անուն կոչի,
Յարեւելեանցն դաւառի,
Պահլաւունեան ազգատոհմի:
Որ եռայեալ հոգով լինի,
Փափագելով յիմաստ բանի,
Եւ ի տանէն իւր հայրենի,
Դիմեալ յերկիր Հելլենացի:
Վարժեալ յիմաստըս ցանկալի,
Ըստ քառեկի գոլ արուեստի,
Ելեալ յեօթըն ատիճանի,
Լուծեալ ըղձիրս անմատչելի»[28]:

Մ. Երզնկացին, իբրեւ փիլիսոփայ, համոզմունքով պաշտպանում է Դ. Անյաղթի ուսմունքի յունաբան ուղղութեան կենսական դրոյթները, դրուատում է յոյն դասական մտածողներին՝ Արիստոտէլին, Հոմերոսին, Պղատոնին, Պիւթագորասին, որոնց ճշմարիտ դաղափարները սնունդ են տուել հայի հանճարին: Առաջնորդուելով նրանց օրինակով, նրանց դիտութեամբ... խրախուսում է Մ. Երզնկացին իր ընթերցողին.

«Բաստոն լինել յաւէտ պիտի,
Գըրոց բանի ամենայնի,
Զի յարքունոյն ոչ թիւրեսցի,
Այլ ուղղակի ընթաց կարցի...

27. Մատենադարան, ձեռ. թ. 5073, թերթ 255ա-բ:
28. Նոյն տեղում, ձեռ. թ. 8371, թերթ 95բ:

Բաքով բաստոն յամենայնի,
Որ Պըղատոնըն ճանաչի,
Այլ եւ նորին նըման ասի,
Արիստոտէլ Ստագիրացի:
Գոլով յաւէտ ի նոյն կարգի,
Որ Հոմերոս քերթեալ նախնի,
Պիւթագորաս հինն ամէնի,
Եւ որ նոցին գոլ նըմանի»[29]:

Բանաստեղծը այլեւս չցանկանալով ծանրանալ այս հարցի վերայ՝ «Զի լսողն տաղտկասցի, կամ ընթերցողն ձանձրասցի», բնութագրում է Դ. Անյաղթի փիլիսոփայութեան հիմնական դերն ու նպատակը:

«Վասն ասելոյն ոմանց բանի,
Իմաստութիւնըն հաւաստի,
Նման Աստուծոյ գոլ ի յերկրի,
Ճշմարտապէս պատմեալ լինի:
Այլ թէ նըման լինել ասի,
Բայց ըստ կարի, որչափ մարթի,
Մահկանացուի ընդ անմահի,
Զի անթերի բանըն ցուցցի»[30]:

Ապա բանաստեղծը առաւել կրքոտ անդրադառնում է Դ. Անյաղթի եւ Պիհռոն իմաստակի բանավէճին: Նա մերժում է մեծ փիլիսոփայի «Պիտակ եւ Կնուտ» հակառակորդների աշխարհամերժ հայեացքները.

«Ի նախնական բանն ընթացի,
Դիմումն մերոյ շարաբանի,
Զոր ի սկզբանըն յիշեցի,
Դիմաբանեալ ընդ Պիհռոնի:
Գիտել ստուգիւ յաւէտ պիտի,
Ըզկարդ բանի զոր պատմեցի,
Նարգինացւոյն մեծին Դաւթի,
Մեծ եւ Անյաղթ հրեատորի:
Թէ ի սկզբան իւրոյ բանի,
Զոր յիմաստնոցըն հաւաքի,
Ցուցեալ ըղշարս իւրոյ բանի,
Թէ ճշմարիտ եւ ատոյգ պատմի:

29. Մատենադարան, ձեռ. թ. 8371, թերթ 96բ, 97ա: Մեզ չյաջողուեց պարզել՝ «Բաքով բաստոն» բառերի իմաստը:
30. Մատենադարան, ձեռ. թ. 8371, թերթ 97բ:

© National Library of Armenia

Որոյ մխեալ ի ճառ բանի,
Ի յիմաստնոցն հեղինացի,
Զի ընդդիմակն յամօթ լիցի,
Ի յարացոյց միշտ՝ ոսոխի»[31]:

Մ. Երզնկացու շուրջ 160 տողանոց իմաստասիրական այս բանաստեղծությունը միաժամանակ պատմա-գրական արժէքաւոր ըսկզբնաղբիւր է՝ թէ՛ Դ. Անյաղթի եւ թէ նրա ուսմունքի հետեւողների՝ ԺԲ-ԺԴ դարերի նշանաւոր գործիչներ՝ Ն. Շնորհալու, Եսայի Նշեցու, Գէորգ Սկեւռացու եւ թէ իրեն՝ բանաստեղծության հեղինակի՝ Մ. Երզնկացու կեանքի ու գործունէության նկարագրի համար:

Դ. Անյաղթի փիլիսոփայության միջին դարերի գրական արձագանգների մէջ մի առանձին խորհուրդ ունի նաեւ ԺԳ. դարի հայ պետական-քաղաքական մեծ գործիչ, զօրավար եւ մատենագէտ Սմբատ Գունդստապլի բանաստեղծությունը՝ այն մարդու, որը «քաջությամբ՝ առաջին յետ Ա. Լեւոնի. գրագիտությամբ այլ առաջին իր դրասէր թագակալ ընտանեաց մէջ»[32]: Մեծ զօրավարն ու իրաւագէտը, որ լաւատեղեակ էր յունական եւ հայ ազգային փիլիսոփայությանն ու գիտությանը, Նիւսացու «Ճաղաս բնության մարդոյ» եւ Արիստոտէլի «Ստորոգությունք» (Դաւթի մեկնությամբ) երկերը ընդօրինակելիս թողնում է մի չափածոյ յիշատակարան: Այն իր ժամանակի գիտա-ճանաչողական լաւագոյն բանաստեղծությունների շարքում կարելի է դասել.

«Ո՛վ հանճարեղք յիմաստ բանիս
Եւ մակացուք յայս արուեստիս,
Մըտադրությամբ միտ դիք բանիս,
Անյաղթ գիտուն վարդապետիս»[33]:

Ռազմագէտ, օրէնագէտ բանաստեղծը իր զարմանքն է յայտնում տարբեր գոյերի (բանական եւ ոչ բանական), մասնաւոր եւ ընդհանուր գոյացությունների վերաբերեալ՝ Դ. Անյաղթի հանճարեղ մեկնաբանությունների, ընդհանրացումների առթիւ.

«Որ զընդհանուրն առեալ գոյիս՝
Տըքնեալ բաշխեաց մարդկան ազգիս.
Իբր ընդհանուր ըզկենդանիս՝
Բաժնեաց ի ձիս եւ ի ջորիս.
Զոր համանուամբք առնէ տեղիս,

31. Նոյն տեղում, թերթ 96բ-97ա. Ձեռագրում՝ «օսոխին»:
32. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 481, ծն. 3:
33. Մատենադարան, ձեռ. թ. 8371, թերթ 98բ:

Իսկ բաշխելով զանունս գոյիս՝
Միաւորէ դարձեալ ի մի՝ս.
Եւ յարանուամբ գոլ նըմանիս,
Որպէս յԱրի ազգէն Արիս,
Կամ ի միոյ նոյն իսկ զարմիս»[34]:

Սմբատ Գունդստապլը Դ. Անյաղթի փիլիսոփայության վերափոխիչ դերը ներկայացնելու հետ միասին անդրադառնում է նաեւ այն հարցին՝ որ ինքն իր համեստ դիրքով, յիշատակագրական-բանաստեղծական կաշկանդող սուղ հանգամանքներում չէր կարող ասել այն ամէնը, ինչ խորապէս զգում էր.

«Արդ, ո՞նց պատմեմ զոմ ըզբանիս՝
Երբ կարի խիստ կարճ է տեղիս.
Բայց թէ հազար կարճեալ բանիս՝
Հարկըն կոչէ զիս յայս տեղիս,
Ցիշել ըզմայրն ամէն գոյիս,
Եւ ըզպատճառ ծնընդականիս»[35]:

* * *

ԺԲ-ԺԴ դարերում Դ. Անյաղթին նուիրուած վերոյիշեալ բանաստեղծությունների հետ միասին՝ մեզ հասել են նաեւ գրական արձակ էջեր, զրոյցներ: Թէեւ դրանք յայտնի են ԺԳ-ԺԶ դարերի ձեռագրերից, սակայն, անկասկած, ստեղծուել են աւելի առաջ՝ մինչեւ ԺԲ. դարը: Բանաստեղծությունները, ինչպէս նկատեցինք, ունեն իրենց յայտնի հեղինակները, իսկ զրոյցները անանուն են եւ դժուար է որոշել նրանց յօրինման ստոյգ ժամանակը: Որ այդ զրոյցները առաւել հին են, վկայում են նաեւ այլ աղբիւրներ: Առաջինը, ամենավստահելին ու կատարեալը Առաքել Սիւնեցու «Գիրք սահմանաց սըրբոյն Դաւթի Անյաղթ փիլիսոփայի հայոց իմաստասիրի» մեկնությունն է, յատկապէս այդ երկի «Վասն նախերգանացն Սահմանաց Դաւթի» հազուագիւտ առաջաբանը, որը փաստօրէն Դ. Անյաղթի կեանքին ու գործունէությանը նուիրուած, միջին դարերից մեզ հասած ամենահին եւ ամբողջական գիտակենսագրական ուսումնասիրությունն է եւ իր մէջ պարունակում է նաեւ (հեղինակի իսկ վկայությամբ) հնուց եկող բազմաթիւ տեղեկություններ: Բացառիկ արժէք են ներկայացնում յատկապէս Առ. Սիւնեցու «Այլ եւ վասն Դաւթի տասն ինչ զանազանելի է» ենթախորագրի տակ առնուած հարցերի

34. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Հայապատում, էջ 481:
35. Նոյն տեղում:

© National Library of Armenia

ու նրանց պատասխանների մէջ պարփակուած պատմական, աւանդական փաստերն ու տեղեկութիւնները։ «Նախ՝ թէ ուստի՞ էր Դաւիթ. երկրորդ՝ յորմէ՞ ազգէ է. երրորդ՝ թէ յորում ժամանակի էր. չորրորդ՝ թէ որո՞վ ուսմամբ է. հինգերորդ՝ որպիսի՞ շնորհս ընկալաւ. վեցերորդ՝ որպիսի՞ պատիւս ունէր. եօթներորդ՝ թէ վասն էր՞ ասի Անյաղթ. ութերորդ՝ թէ զի՞նչ է փիլիսոփայն. իններորդ՝ թէ քանի՞ գիրք սահմանեաց ի հայս. տասներորդ՝ թէ վասն էր՞ ոչ արդիւնացաւ խմաստք նորա ի հայս»[36]։

Դ. Անյաղթի կեանքի ու գործունէութեան շուրջ միջնադարից յայտնի երկրորդ, նոյնքան արժէքաւոր աղբիւրը՝ 1555 թուականի ձեռագրով հասած՝ «Յաղագս սրբոց վարդապետաց հայոց Մովսէսի եւ Դաւթի» պատմութիւնն է, որի բնագիրը անհրաժեշտ ծանօթագրութեամբ հրատարակել է նշանաւոր հայագէտ Գ. Վ. Սրուանձտեանցը։ Այս ձեռագիրը առաւել թանկագին է նրանով, որ յոյժ կարեւոր տեղեկութիւններ է պարունակում յատկապէս Մ. Խորենացու եւ Դ. Անյաղթի վաղ շրջանի համատեղ գործունէութեան մասին. «Շուշտեմ տպագրեալ իցէ՞ այս մասն պատմութեան – գրում է Գ. Սրուանձտեանցը –, որ յաղագս աշակերտութեան Մովսէսի եւ Դաւթի, չինող լինելոյ նոցա զքաղաքն Կարին, դնալոյ յԱթէնս, ուրանօր լինելոյ նոցա եւ յառաջանալոյ, եւ ՈՒՍՈՒՄՆԱՊԵՏՍ կարդելոյ. որ ունի նաեւ զնկարագիր արարողութեանց քննութեանց ուսումնարանի հանդիսի, ուր ԱՆՑԱՂԹ հանդիսացեալն է Ներգելանեցին չինական. զդարձ նոցա ի Բիւզանդիոն, ուր պատահել Յորնաղայ...։ Ի սա պատմի սրտառուչ վերադարձն ի Հայաստան»[37] եւ այլն, եւ այլն։

Բարեբախտաբար ձեռագրական աղբիւրներով մեզ հասել են նաեւ գրական այնպիսի երկեր, զրոյցներ, որոնց ակունքները այլ են եւ թերեւս աւելի հնից են գալիս՝ քան Առաքել Սիւնեցունը եւ 1555 թուականի ձեռագրինը։

Դ. Անյաղթի շուրջը ստեղծուած գրական զրոյցների մէջ պատմական եւ գաղափարական առումներով առաւել հետաքրքրական են «Գիրք սահմանաց»ի ստեղծագործական պատմութեանը անմիջապէս վերաբերող զրոյցները։ Առաջ բերենք ԺԳ դարի գրչութեամբ, գրականագիտութեանը անծանօթ, այդպիսի մի զրոյց, որն, անկասկած, արդիւնք է Դ. Անյաղթի փիլիսոփայութեան շուրջը եղած գիտական, գաղափարական իրերամերժ, թէժ պայքարի։ «Դաւիթ ազգաւ հայ էր եւ հայոց աշխարհէն. եւ ուսաւ զգիրս յունաց եւ վարժեցաւ. ապա

36. ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵՑԻ, Գիրք սահմանաց սրբոյն Դաւթի Անյաղթի փիլիսոփայ հայ իմաստասիրի, Մադրաս, 1797, էջ 169։

37. Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ, Հնոց եւ նորոց, Պոլիս, 1874, էջ 31–33։

անդ սիրեցաւ ի թագաւորէն իւր ընկերաւքն, եւ առաքեցան յԱթէնս՝ ի մայրն իմաստութեան եւ ուսան զամենայն իմաստասիրութիւնս։ Եւ եկն յաշխարհն իւր նա. զէտ ի ժամանակս մարդարէիցն յարեան սուտ մարգարէքն, նմանապէս ի ժամանակս առաքելոցն՝ սուտ առաքեալքն, նաեւ ի ժամանակս իմաստասիրացն՝ սուտ իմաստունքն յարեան եւ հակառակէին ընդ ճշմարիտ իմաստասիրութիւնն։ Յորոց եւ մի էր Պիհռոն, որ իւրաեւքն հակառակէր եւ ասէր՝ թէ ոչ է իմաստութիւն։ Յաղագս այսորիկ հանդիսանայ մեծ իմաստասէրն Դաւիթ եւ ցուցանէ իմաստասիրական եղանակաւ՝ թէ է՛ իմաստասիրութիւն եւ որպէս ամենայն էքս, որ էացեալ են յԱստուծոյ՝ թէ՛ կենդանի եւ թէ անկենդան, թէ՛ բանական եւ թէ անբան, ամենեքեան սահման ունին եւ առանց սահմանի ոչ դտանի էութիւն։ Նա ցուցանէ եւ իմաստութեանն սահման, ապա յառաջագոյն զայն կամի ուսուցանել»[38]։ Գրական այս զրոյցը, որ ինքնին պատմա-փիլիսոփայական, իմաստասիրական բնոյթի, սեղմ, փոքրիկ, աւարտուն մի ակնարկ է, զօրաւոր ապացոյց է այն բանի՝ թէ ո՛րքան մեծ է եղել Դաւիթ Անյաղթի հռչակն ու սէրը ժողովրդի մէջ, հայութեան լայն շրջաններում եւ թէ ո՛րքան ուժեղ է եղել ճշմարիտ գիտութեան, փիլիսոփայութեան աշխարհականացման ներքին մղումը միջին դարերում։ Այս զրոյցը, որ անմիջականօրէն կապւում է «Սահմանքի» ստեղծագործական պատմութեան հետ, ընթերցողին մտովին փոխադրում է վաղ միջնադարը, եւ հանճարեղ մտածողի ուսմունքի շուրջ պայքարի մէջ մտած մարդկանց միջավայրը. «Յարեան եւ հակառակէին ընդ ճշմարիտ իմաստասիրութիւնն»։ Սահմանքի հետ կապուած մեզ հասել է նաեւ մի այլ զրոյց՝ Առաքել Սիւնեցու միջոցով։ Այդ զրոյցը ԺԸ. դարում աննշան կրճատումներով տպագրել է Պաղտասար Դպիրը. «Եւ պատճառն զրեալոյ մեծին Դաւթի զգիրքս սահմանաց՝ այս է։ Զի յորժամ մեծն Դաւիթ եւ իւր ընկերքն գնացին յԱթէնս ի յուսումն՝ տեսին բիծ ի վարս վարդապետացն, եւ զայրացեալ մեղադրեցին նոցա։ Եւ նոցա լուեալ խոժոռեցան եւ ասացեալ մեղադրեցին նոցա։ Եւ խորհեցան չթողուլ այլեւս զոք ի հայոց գալ յԱթէնս առ ուսումն։ Վասն որոյ արար Դաւիթ զգիրքս զայս յանդիմանութիւն նոցա՝ թէ տեսէք որ այլ ո՛չ եմք կարօտ գալ ի յԱթէնս ի յուսումն։ Եւ դիտաւորութիւն Գրքիս է ընդդէմ Պիհռոնացւոցն, որք ասէին թէ զոր իմաստասիրութիւն է ընդդէմ Պիհռոնացւոցն, որք ասէին թէ զոր իմաստասիրութիւն կոչէք՝ էութիւն եւ գոյութիւն չունի, այլ է լոկ ասութիւն՝ որպէս զմտածական էական։ Վասն որոյ ասաց եւ մեկնեաց երանելին զվեց

38. Մատենադարան, ձեռ. թ. 1766, թերթ 1ա։ Զրոյցը ձեռագրում զետեղուած է «Սահմանք»ից առաջ։ Այն ժամանակին տպագրել է մեծանուն գիտնական Յ. Մանանդեանը իր Յունարան դպրոցը երկում, Վիեննա, 1928, էջ 281–282։

© National Library of Armenia

սահմանս իմաստասիրութեան, որովք ցուցանի՝ թէ զո՛յ իմաստասիրութիւն»[39]: «Սահմանք»ի ստեղծագործական պատմութեան հետ կապուած այս երկերից երեւում է, որ հնում եղել է բանաւոր մի զրոյց (Դաւիթ Անյաղթի Պիհռոն իմաստասէրի հետ ունեցած վիճաբանութեան շրջանում) եւ նրա հիման վրայ ստեղծուել են նաեւ գրաւոր զրոյցներ: Զրոյցը հին քաղաքակիրթ ազգերի գրականութեան տարածուած ձեւերից մէկն է: Հայ գրերի գիւտից յետոյ, Դ. Անյաղթի գիտական, փիլիսոփայական վէճերի մէջ տարած յաղթանակները, բնականաբար, կարող էին շարժել նաեւ այդ դարերի գրական մարզի առանձին գործիչների ստեղծագործական միտքը: Մ. Խորենացու «Հայոց պատմութեան» միջոցով մեզ հասած զրոյցների գոյութեան փաստը հիմք է տալիս նման եզրակացութիւնների համար: «Սահմանք»ի ստեղծագործական պատմութեան հետ կապուած զրոյցներից բացի, զրոյցներ կան նաեւ, ինչպէս նկատեցինք, Մ. Խորենացու եւ Դ. Անյաղթի իբրեւ «արս քաջս եւ ճարտարապետս» Կարին քաղաքի շինութեան գործը ղեկավարելու մասին, այնուհետեւ Խորենացու եւ Դաւթի՝ յոյն իմաստասէր Մելիտոսի հետ ունեցած վիճաբանութեան հարց ու պատասխանի շուրջը, եւայլն: Այս բոլորի մէջ, սակայն, իբրեւ գեղարուեստական երկ, առաւել հետաքրքրականն ու կատարեալը Դաւթի «Անյաղթ» կոչումը ստանալու հետ կապուած պատմութիւնն է: Ցունաստանում ընդունուած սովորութիւն է եղել եօթ տարի Աթէնքում իմաստասիրական կըրթութիւն ստացողների համար հրապարակային մրցոյթ կազմակերպել: Ահա, այդպիսի մի մրցոյթի է արժանանում նաեւ Դաւիթ Հայը՝ վաթսուն ուսումնակից ընկերների հետ: Քաղաքի կենտրոնական հրապարակում բարձրանում է մի վիթխարի պղնձեայ սիւն, որի վրայ գրուած են եօթ թագաւորների հետեւեալ բանքերը. «Եւ էր գրեալ ի սիւնն բանքս այսպէս. Է թագաւորի: Սողոն Աթենացի՝ Մի՛ ինչ յոյժ: Թագաւոր Քեղոն Մակեդոնացի՝ Ծանիր զքեզ: Թագաւոր Թէղէս Մեղէսացի՝ Երկի՛ր, մերձ վնաս մեծ յոյժ: Թագաւոր Դիաս Պիրենդացի՝ Բազումք չարք: Թագաւոր Պիտպակոս Միդեղէնացի՝ Ժամանակ ծանիր: Թագաւոր Պիտիանդրոս Կորնթացի՝ Վարժումն ամենայնի: Թագաւոր Կղէբուղոս Զենդացի՝ Զափաւոր եւ անբաւ»[40]: Ով որ եօթ թագաւորների այդ խօսքերը կարդար եւ ճիշտ մեկնաբանէր, նա կը ստանար՝ «վարդապետ ամենայն իմաստասիրական ուսմանն» կոչումը, եւ որչափ մնար, ապրէր Աթէնքում՝ կը պահպանէր այդ տիտղոսը: Վաթսուն ուսումնաւարտ իմաստասէրները կանգնում են պղնձեայ աշտարակի առջեւ. բոլորը լուռ են, մտա-

39. Գիրք սահմանաց, Կ. Պոլիս, 1731, էջ 337–338:
40. Գ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ, Հնոց եւ նորոց, էջ 52–53:

խոհ, ապշահար հայեացքները՝ յառած դէպի սիւնը. քանզի «բանք սակաւ եւ մեկնութիւն բազում»: Գրուած բանքերը բարդ են, անըմբռնելի, վերծանելն՝ անհնարին: Եւ ահա, Դաւիթը սկսում է մըտքում բանքերը մէկ առ մէկ, բառ առ բառ կարդալ, լուռ մտածել, ստուգել ինքն իրեն եւ երբ նա համոզւում է իր մեկնութեան ճշմարտութեան մէջ, համարձակօրէն նետւում է դէպի պղնձեայ աշտարակի ատեանը: Ողջ բազմութիւնը նայում է նրան. «զի քաղաքն առ հասարակ եկեալ էին ի տեսիլ բանիցն»: Դաւիթը բարձրանում է սեան վերին աստիճանի վրայ եւ ձեռքով հանդստացնում է զարմանքից ու հետաքրքրութիւնից ապշահար ամբոխին: Ժողովուրդը խաղաղւում է, բոլորը լուռ լսում են: Դաւիթը ճարտասանական բարձր արուեստով, զարմանալի հմտութեամբ եւ ճշտութեամբ բացայայտում է իմաստասիրական այդ ծածուկ մտքերը՝ զարմանք եւ հիացմունք պատճառելով ամէնքին. «Դաւիթ որպէս զման լուսեղէն սկըսաւ ծագել զլոյս վարդապետութեան իւրոյ, եւ բան առ բան զծածկեալ թագաւորացն մեկնէր ահաւոր բանիւք. եւ ամենեցուն հիացեալ զարհուրեցան ընդ ճշմարիտ նմանութիւն բանիցն»[41]: Ցաղթանակի ոսկեզօծ, ականակուռ, մարգարտակերտ վահանը յանձնւում է Դաւթին: Ուսումնակից ընկերները խորին հրճուանքով ու յաղթական բացագանչութիւններով բարձրացնում են Դաւթին իրենց ուսերի եւ գլուխների վրայ, բացագանչելով՝ «Անյաղթ», «Դաւիթ Անյաղթ», եւ այսպէս նրանք ամբողջ օրը, փողի եւ արնդի նուագակցութեամբ, շրջում են Աթէնք քաղաքի փողոցներով:

Միջնադարեան գեղարուեստական մանր արձակի սեռին հարուստ պատմութեան մէջ բացառիկ կարեւորութիւն ունեն Դ. Անյաղթին նուիրուած բոլոր զրոյցները: Դրանք ձեւով ու բովանդակութեամբ կատարեալ են, ներդաշնակ, սեղմ, հոգեբանական դիտումներով հարուստ: Զկան զրոյցին յատուկ՝ չափազանցուած, հրաշապատում, վերացական դատողութիւններ, երկարաշունչ նկարագրութիւններ: Պատմական եւ աւանդական դէպքերն ու երեւոյթները ներկայացուում են կուռ, միասնական, տրամաբանական զարգացման մէջ, գեղեցիկ, մատչելի գրաբարով, յուզական, պատկերաւոր նկարագրութիւնների մէջ: Ստեղծուած լինելով աւանդութիւնների հիմքի վրայ, Դ. Անյաղթին նուիրուած այդ զրոյցները թւում է թէ մեզ հասել են իրենց ակզբնական հիւսուածքով, գրական ձեւի մէջ: Դրանք անհատական, անանուն, փոքրածաւալ երգեր են, որոնք ցոյց են տալիս՝ թէ ո՛րքան հնից են գալիս այս զրոյցները եւ թէ ո՛րքան վաղ շրջանից է սկսուել գիտութեան ու փիլիսոփայութեան աշխարհակալման ընթացքի արտացոլքը անհատական գեղարուեստական ըս-

41. Նոյն տեղում, էջ 54–55:

© National Library of Armenia

տեղծագործութեան մէջ։ Դրանք անխառն գիտա–փիլիսոփայական, պատմա–կենսագրական բովանդակութիւն ունեն։ Միջնադարից մեզ հասած գեղարուեստական արձակի այս դեղեցիկ նմոյշները իրենց գեղագիտական ներքին համոզչականութեամբ մարմնաւորում են Դ. Անյաղթի՝ գիտնականի, փիլիսոփայի, արուեստագէտի, տեսական հզօր կարողութիւնների ու մտքի տէր գործչի, մեծ քաղաքացու ու հայրենասէրի կերպարը։

Դ. Անյաղթի նուիրուած գրական ստեղծագործութիւններով նկատելիօրէն փոխւում է ԺԲ–ԺԴ դարերի հայոց գեղարուեստական գրականութեան ծանօթ նկարագիրը, առաւել ցայտուն են դառնում գիտութեան, փիլիսոփայութեան աշխարհականացման ընթացքի գեղագիտական ըմբռնման այն չափերը, որոնք յայտնի են այդ դարերի նշանաւոր բանաստեղծների համապատասխան ստեղծագործութիւններից։

ԺԵ–ԺԸ դարերում պատմագիտութեան, փիլիսոփայութեան, արուեստի ու գրականութեան գրչագիր օրինակներում, միջնադարեան նշանաւոր գործիչների ինքնուրոյն ու մեկնողական, թարգմանական, բաղմաբնոյթ երկերի ձեռագիր եւ տպագիր էջերում, մենք հանդիպում ենք բազմաթիւ այլ քերթուածների՝ ներբողների, չափածոյ յիշատակարանների, երկտող ու քառատող բանաստեղծութիւնների ֆեայլը, որոնք լրացնում, հարստացնում են միջնադարեան հայ ուսուցողական–ճանաչողական բանաստեղծութիւնը՝ լայն առումով։ ԺԸ դարում, սակայն, նոր ուժով զարգանում է յատկապէս գիտական, փիլիսոփայական, տեսական (կանոնական, օրէնսդիր) ուսուցողական, ճանաչողական բանաստեղծութիւնը։

Դ. Անյաղթի գիտական ուսմունքի նկատմամբ ԺԷ դարում վերըստին ուժեղացող տեսական եւ գործնական հետաքրքրութիւնը (Ս. Ջուղայեցի, Ստ. Լեհացի, Յ. Ջուղայեցի եւ այլք) ԺԸ դարում շարունակւում է եւ ստեղծում է անյաղթագիտութեան մի նոր շարժում։

Արդ, պատմական ի՞նչ նախադրեալներ կային Դաւիթ Անյաղթի գրական ժառանգութեան վերահաստատման եւ իւրացման համար ԺԸ դարում. ի՞նչ ազդեցութիւն, ի՞նչ հետք է թողել վաղ միջնադարի անմահ իմաստասէրը նոր ժամանակների գրական–ստեղծագործական մտքի վրայ։

Յայտնի է որ ԺԸ դարի հայ նոր եւ ընդհանուր վերանորոգութեան շարժումը՝ տնտեսական, քաղաքական ու մշակութային եռագիծ զարգացման նոր ընթացքի մէջ, միաւորում է աշխարհացրօնք հայութեանը՝ ինքնանանչման, ինքնահաստատման նշանաբանով։ Դժուարին, բարդ ու առանձնայատուկ այս հանգամանքներում, գեղարուեստական գրականութիւնը, իբրեւ մշակութային շարժման կարեւորագոյն օղակ, կատարում է անցման շրջանի իր

վճռական ֆայլը եւ կանգնում՝ հնի եւ նորի ֆառուդիում։ Յայտնի է նաեւ, որ դարի գրական շարժման առաջաւոր գործիչները ձգտում են վերակենդանացնել հայ հին եւ միջին դարերի գրականութեան դաղափարախօսութեան ու արուեստի գծերը, եւ միաժամանակ հետեւելով լուսաւոր ազգերի գեղագիտական մտքի նուաճումներին՝ իրենց նախնական ֆայլերն են անում դէպի գրական սեռերի զարգացման նոր, եւրոպական ճանապարհը։ Նկատենք նաեւ, որ ԺԸ դարում, հայ սչուղական–ժողովրդական բանաստեղծութեան բուռն վերելքի պայմաններում, գրական–անհատական ստեղծագործութեան էր վիճակուած, ըստ ամենայնի, արձագանգելու հայոց նոր եւ ընդհանուր վերանորոգութեան շարժման դաղափարախօսութեանը, հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի հետ կապուած հարցերին։ Եւ դա հասկանալի է. գրական, անհատական ստեղծագործութեամբ է ձեւաւորւում ամէն մի ժողովրդի գրականութեան մայրուղին, գրական–անհատական ստեղծագործութեան զարգացման ընթացքի մէջ է կազմաւորւում, ամբողջականանում՝ որեւէ ժողովրդի ազգային դասական գրականութեան պատմութիւնը, որոշւում նրա զարգացման պարբերակարգը։ Այս առումով յոյժ ուշագրաւ եւ գրեթէ մոռացուած օղակ է եղել ԺԸ դարը։

ԺԸ դարի վերանորոգուող գրական շարժման ընթացքի մէջ, քննարական, պատմա–քնարական բանաստեղծութիւնների, ողբի ու հառաչանքի, տթափումի, սիրոյ եւ ուրախութեան եւ այլ երգերի հետ միասին, աւելի քան երբեւէ, ինչպէս ակնարկեցինք, զարգանում է գիտական, ճանաչողական, օգտամէտ բանաստեղծուբ-իւնը։ Անցեալից եկող եւ շարունակաբար զարգացող բարոյա–խրատական, կրթական, ուսուցողական լայնահուն բանաստեղծութեան շրջանակներում ամրանում, հաստատւում է գիտական, տեսական բանաստեղծութեան մի նոր շերտ։ Հնադարեան յունա–հռոմէական գիտութեան, փիլիսոփայութեան, դրականութեան ու արուեստի նկատմամբ բուռն հետաքրքրութիւնը միջին դարերի արեւմտեան Եւրոպայում, այդ հիմքի վրայ դասականութեան՝ իբրեւ ազգային գրական ուղղութեան՝ զարգացումը եւ նրա ցոլքերի ներթափանցումը դէպի հայ իրականութիւնը, նպաստում են, որպէսզի հայ նոր եւ ընդհանուր վերանորոգութեան շարժման գործիչները վերստին, նորովի հետեւեն հին աշխարհի գիտա–փիլիսոփայական մտքի այն նուաճումներին, որոնք իւրացրել ու զարգացրել էին իրենց նախորդները՝ գրերի հանճարեղ գիւտին յաջորդող շրջանից ի վեր…։ Իբրեւ այս երեւոյթի արդիւնք, հայոց կրթական–ուսուցողական–ճանաչողական հարուստ բանաստեղծութեան գիտական լիցքը մեծանում է։ Ինչպէս երբեք նախորդող դարերում, ԺԸ դարի ուսուցողական բանաստեղծութեանը նիւթ է մատակարարում հայոց անցեալը, յատկապէս Ե–ԺԳ դարերի

© National Library of Armenia

պատմութիւնը. ստեղծուում են դրերի գիտին, թարգմանիչներին, լուսաւորիչներին, ազգի եւ եկեղեցու նահատակներին, հերոսներին, նշանաւոր պատմագիրներին, փիլիսոփաներին, բանաստեղծներին նուիրուած գիտա-ճանաչողական բանաստեղծութիւնների նոր շարքեր: Եթէ ի մի բերուեն միայն ԺԸ դարում գիտութեան, փիլիսոփայութեան, արուեստի, գեղագիտութեան հարցերի շուրջ ստեղծուած գրաւոր բանաստեղծութիւնները, ապա կարելի կը լինի մի առանձին ժողովածու կազմել:

ԺԸ դարի հայ նոր եւ ընդհանուր վերանորոգութեան շարժման, հայ գեղարուեստական գրականութեան ազգային, նպատակադիր առաջընթացի այս հանգրուանում, ահա՛, հայոց երկնակամարի վրայ վերստին փոյանում է Դաւիթ Անյաղթի լուսափայլ աստղը: Դա կատարւում է հայ նոր եւ ընդհանուր վերանորոգութեան շարժման հրամայական պահանջով: Իրապէս, ԺԸ դարի հայ գիտական-փիլիսոփայական, կրօնա-դաւանաբանական, քաղաքական-հրապարակախօսական գրականութեան մէջ, ուսումնակրթական հաստատութիւնների գործունէութեան, հայ գրական-քնարական բանաստեղծութեան վրայ եւայլն, խորն ազդեցութիւն է թողնում մեծ իմաստասէրի անունն ու գործը, նրա կենսափիլիսոփայութիւնը, նրա իւրովի գիւցաղնական կերպարը, առասպելական վարքը եւ յատկապէս նրա «Գիրք սահմանաց» հանճարեղ երկը:

Դ. Անյաղթի ազդեցութիւնը ԺԸ դարի գրական կեանքի վրայ, ինչպէս Ժ-ԺԴ դարերում, դրսեւորւում է ընդհանուր եւ որոշակի, ուղղակի եւ անուղղակի, տեսական եւ գործնական առումներով: Պատմական այդպիսի կապի եւ ազդեցութեան շատ ուշագրաւ օրինակներ են մեզ տալիս դարի գրական վերանորոգութեան շարժման նշանաւոր գործիչներ՝ Խաչատուր Էրզրումեցին, Մխիթար Սեբաստացին, Յովհաննէս Բաղիշեցին, Պաղտասար Դպիրը, Պետրոս Ղափանցին, Յակոբ Նալեանը, Սիմէոն Երեւանցին, Ղազար Զահկեցին, Պետրոս Նախիջեւանցին, Ստեփանոս Ագոնցը, Շահամիրեանները, Յարութիւն Շմաւոնեանը, Թադէոս Զուղայեցին եւ այլք:

Դ. Անյաղթի ուսմունքի ընդհանուր ազդեցութեան (արեւմտեան-եւրոպական տեսական-փիլիսոփայական մտքի միջնորդութեամբ) առաջին կրողը ԺԸ դարում Խաչատուր Էրզրումեցին է (նաեւ՝ Խաչատուր Կարնեցի, Խաչատուր Առաքելեան), Մխիթար Սեբաստացու մբտերիմ գործակիցը՝ գիտութեան մարդում: Իբրեւ իր ժամանակի փիլիսոփայ, մնոտեսագէտ, արուեստագէտ, մարդու իրաւունքի, ազատութեան հարցի առաջին տեսաբան, իբրեւ ճարտասան, քերականագէտ, գիտա-փիլիսոփայական ուսուցողական բանաստեղծութեան հիմնադիր՝ Խ. Էրզրումեցին երեւոյթ է ԺԸ դարի հայ գրական, վերանորոգութեան շարժման պատմութեան մէջ:

Խաչատուրը առաջին մարդն էր, որ միջնորդ հանդիսացաւ արեւմտեան գիտութեան եւ հայերի միջեւ: Այս նշանաւոր աշխատութիւնը, գրում է Լէօն նրա «Համառօտական իմաստասիրութիւն» ոտանաւոր երկհատորեակի մասին, ինչպէս նաեւ Խաչատուրի միւս գործերը, ազգի սեփականութիւնը դարձան ԺԸ դարում. «գիտութիւնների մի ամբողջ ժողովածու, մի ամբողջ հանրագիտակ, որի վրայ հայ ընթերցողը պիտի խելամուտ լինէր այն ամէնին, ինչ տալիս էր եկեղեցուն ստրկացած փիլիսոփայութիւնը: Մեծ չէր այդ հարստութիւնը համամարդկային առաջադիմութեան տեսակէտից, բայց հայկական աղքատ ու տգէտ իրականութեան համար մի մեծ բարիք էր, որովհետեւ, այնուամենայնիւ, եւրոպական միտք էր ներկայացնում եւ տալիս էր այնպիսի հասկացողութիւններ, որոնք բոլորովին անյայտ նորութիւններ էին այն ժամանակուայ մտաւոր կացութեան մէջ»[42]:

Խ. Էրզրումեցու «Համառօտական իմաստասիրութիւն» ոտանաւոր երկհատորեակի տեսական, գիտական օրէնքների ու սահմանումների վրայ («Յաղագս սահմանի», «Յաղագս սահմանի արուեստի», «Յաղագս սահմանի հռետորութեան», «Յաղագս սահմանի տրամաբանութեան», «Յաղագս սահմանի ֆիզիկայի, որ է բնութենական գիտութիւն», «Յաղագս սահմանի մարդոյ», «Յաղագս սահմանի բժշկութեան», «Յաղագս սահմանի բարոյականութեան», «Յաղագս սահմանի քաղաքականութեան, որ է քաղաքական գիտութիւն», «Յաղագս սահմանի մաթեմատիկայի», «Յաղագս սահմանի երկրաչափութեան», «Յաղագս սահմանի աստղաբաշխութեան», «Յաղագս սահմանի մետաֆիզիկայի» եւայլն), նկատւում է գեղագիտութեան, ճանաչողական եւ մտածողական ձեւերի ու եղանակների, գիտութեան, փիլիսոփայութեան, բարոյականութեան վերաբերմամբ՝ Դ. Անյաղթի յեղափոխիչ ուսմունքի ընդհանուր ազդեցութիւնը: «Քանզի ամենայն մակացութիւն է ընդունելի եւ սիրով ընդգրկելի եւ քանզի ամենայն արուեստ ի յինքենէ շահաւէտ եւ օգտակար, եւ զայս իմաստասիրական գործս, որ գրկէ զարուեստս եւ զգիտութիւնս, իմաստասիրութեան ձերում յանձն առնեմ եւ խնդրեմ ի ձէնջ, զի խոնարհեցեալք պտղաբերաբար զնա վայելեցէք»[43], – գիմում է Խ. Էրզրումեցին իր ընթերցողին: Հայոց ազգը աւելի քան կարիք ունի գիտութեան լոյսին, գրում է նա այլուր. «Քանզի է ի մէջ այլ ազգաց եւ է ի մէջ գերութեան. վասն այսորիկ առաւել հարկաւոր են հայոց ազգին ուսմունք, քանզի սոքօք առաւել կարեն յաղթել զթշնամիս...

42. Լէօ, Հայոց պատմութիւն, Գ. հտ., Երեւան, 1946, էջ 976:
43. Խ. ԷՐԶՐՈՒՄԵՑԻ, Համառօտական իմաստասիրութիւն, Ա. հտ., Վենետիկ, 1711, էջ 1:

© National Library of Armenia

ուստի պարտիմք ջանալ առաւել ի մահ մատնիլ՝ քան թէ ի բաց լինիլ յուսմանց դրոյ...: Գիտութիւն ըստ ինքեան խմացեալ լոյս է եւ ցուցանէ մեզ զչարն եւ զբարին, զչարն իբրեւ խոտելի եւ զբարին իբրեւ զրկելի, ընդունելի եւ սիրելի»[44]:

Խ. Էրզրումեցու փիլիսոփայական այս հայեացքները, նրա սահմանումների ելակէտային դրոյթները շատ կողմերով աղերսւում են Դ. Անյաղթի կենսափիլիսոփայութեանը: Գիտութիւնը, խմաստասիրութիւնը, գրում է Դ. Անյաղթը, կատարելագործում է մարդուն, լցնում է նրա հոգին բարութեամբ, առաքինութեամբ, «փոփոխելոյ զնա ի նիւթային և ի մառախղուտ կենցաղոյս յաստուածայինն և յանմահն»: «Եւ պարտ է գիտել – գրում է Դ. Անյաղթը –, եթէ մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ հանճարոյ ընդունակ»: Բանական էակը, մարդը, խմաստասէրը, գիտնականը, փիլիսոփան պէտք է լինի կատարեալ, անթերի, անապական. «... կատարեալ իմաստասէրն խնամ տանի անկատար ոգւոց ի կատարեալ գիտութիւն ածելով զնոսա»[45]:

Այս գաղափարներն, ահա, ամենայն պարզութեամբ զարգացնում է Խ. Էրզրումեցին նաեւ իր տեսական, օրէնսդիր բանաստեղծութեան էջերում: Նա՛ եւս մարդուն բնութագրում է իբրեւ կենդանական աշխարհի բարձրագոյն գոյը, իբրեւ անբան, կենդանի էակների առաջնորդող ոյժը բնորոշում է մարդ–բանականի բարձր կոչումը. մեկնաբանում է խմաստասէրի ու խմաստասիրութեան, գիտնականի ու գիտութեան, մտաւորի եւ մտաւորականութեան գործնական դերը մարդկային, հասարակական յարաբերութիւնների կարգաւորման հարցերում եւայլն.

«Խմաստասէրք յարանուանին,
Որք խմաստութեան հետեւին...
Զկերպ գիտելոյ կանոնեն,
Առ գիտութիւնս առաջնորդեն.
Եւ զբնութիւնս իրաց քննեն,
Զյատկութիւնս նոցին որոնեն»[46]:

«Եւ արդ վասն զի խմաստասիրութիւն է առաջիկայս մեզ՝ ե՛ւ զեղեցկագոյն ե՛ւ պատուականագոյն ամենայն գործոց մարդկան», գրում է Դ. Անյաղթը «Սահմանք»ում[47]:

44. Խ. ԷՐԶՐՈՒՄԵՑԻ, Գիրք քերականութեան, *էջմիածին*, *Պոլիս*, 1796, էջ 14, 16:
45. Երկասիրութիւնք, Սահմանք, էջ 104, 41, 47:
46. Խ. ԷՐԶՐՈՒՄԵՑԻ, Համառօտական իմաստասիրութիւն, Ա. հտ., էջ 539–540:
47. Երկասիրութիւնք փիլիսոփայականք, էջ 31:

Գիտութիւնը, խմաստասիրութիւնը բարձրագոյն ճշմարտութիւն է. այն գերադանց է՝ «քան զպատուական ակունս», «քան զիշխանութիւնս բարձունս», «քան զփառս՝ գեղեցկագոյն», «քան զփարթամութիւն, հարստութիւն» եւ «քան զաթոռս՝ լաւագոյն», գրում է Խ. Էրզրումեցին իր խմաստասիրական քերթուածին մէջ:

Փիլիսոփայ հանրագէտը տեսականօրէն զարգացնում, հիմնաւորում է գիտութիւնը կեանքին մօտեցնելու, գիտութեան եւ կեանքի կապը ուժեղացնելու, գիտնականի խօսքի եւ գործի միջեւ եղած անջրպետը վերացնելու հարցերը: Դաւիթ Անյաղթի բնութագրած «մտաց եւ հանճարի ընդունակ» մարդիկ, ըստ Խ. Էրզրումեցու պարտաւոր են՝

«Որպէս խմաստութեամբ փայլին,
Այսպէս եւ սուրբ գործովք պճնին...
Որպէս ի գիրս պայծառանան,
Այսպէս ի գործս ազնուանան,
Որպէս զբրովք այլոց օգնեն,
Այսպէս եւ գործովք սատարեն:
Որպէս զմիտ լուսաւորեն,
Այսպէս նաեւ զկամքս ուղղեն,
Որպէս լեզուաւ վարդապետեն,
Օրինակօք զնա հաստատեն»[48]:

Խ. Էրզրումեցին երբեմն ուղղակիօրէն կրկնում է Դ. Անյաղթի տեսական առանձին բանաձեւերն ու օրէնքները՝ պարզունակ ոտանաւորի ձեւի մէջ առնելով դրանք: «Եկեցուք յառաջին գլուխն – կարդում ենք Դ. Անյաղթի «Սահմանք»ում – եւ ասացուք, թէ զինչ է սահման: Սահման է բան կարճառօտ, յայտնիչ բնութեան ենթակայ իրի»[49]: *Խ. Էրզրումեցին «Յաղագս սահմանի» իր չափածոյ երկում գրում է.*

«Զի եւ սահման զիր ցուցանէ,
Զիրի բնութիւն նըշանակէ...
Սահման է յայտնիչ բնութեան,
Եւ բացայայտիչ էութեան,
Քանզի զբնութիւնն իրի յայտնէ,
Զէութիւն նորա ցուցանէ»[50]:

48. Խ. ԷՐԶՐՈՒՄԵՑԻ, Համառօտական իմաստասիրութիւն, Ա. հտ., էջ 544:
49. Երկասիրութիւնք փիլիսոփայականք, էջ 40:
50. Խ. ԷՐԶՐՈՒՄԵՑԻ, Համառօտական իմաստասիրութիւն, Ա. հտ., էջ 120:

© National Library of Armenia

Խ. Էրզրումեցին իր ուսուցողական բանաստեղծութեան էջերում չօշափում է նաեւ մարդու բարոյական, անձնական, տնտեսական, իրաւական ազատութեան հարցերը, հարկաւ, քաղքենիական լուսաւորութեան, մարդասիրութեան դիրքերից։ Միայն անարդար իրաւունքը, անմարդկային կրքերը, հարստանալու մոլուցքը, ընչաքաղցութիւնը, ազգերի տարկացման ձգտումները, ուրիշի վաստակին տիրելու, աղքատների արեամբ հարստանալու կրքերն են ծնում բռնի իշխանութիւններ, բռնապետական կարգեր, գրում է Խ. Էրզրումեցին իր «Ցաղագս քաղաքականութեան» ոտանաւոր ընդարձակ բաժնում։ Խ. Էրզրումեցու՝ փիլիսոփայական քերթուածներում բարձրացրած տնտեսական–քաղաքական առանձին խնդիրները չեն կորցնում իրենց հնչեղութիւնը։ Պատերազմի մասին նրա տեսութիւնը ընդունելի է եւ այսօր։ Խ. Էրզրումեցին տարբերում է պատերազմի երկու տեսակ՝ արդարացի, պաշտպանողական, եւ անիրաւ, անարդար, յարձակողական, բռնատիրական պատերազմ։ Յարձակողական պատերազմը, ըստ Խ. Էրզրումեցու, չարիք է մարդկային հասարակութեան համար, քանզի՝

«Այրէ, կիզէ եւ հրդեհէ,
Հըրով ծախէ եւ ըսպառէ.
Զաղատ անձինս դերիս վարէ
Նաեւ ծառայեցուցանէ...
Անդըթաբար վըրէժ խնդրէ,
Առանց չափոյ պատուհասէ...
Քանզի անիրաւ գըտանի,
Եւ իրաւանց հակառակի.
Վասն որոյ դատապարտելի,
Ատելի, արհամարհելի»[51]։

Խ. Էրզրումեցու՝ այսպէս կոչուած գործնական փիլիսոփայութեան հիմքում ընկած է քաղքենիական հումանիզմը եւ արդարութեան ըմբռնումը, իրաւացիօրէն ընդգծում է պրոֆ. Գաբրիէլեանը։ «ԺԸ դարում – գրում է նա –, երբ հանգամանքները փոխուեցին, երբ հայ ժողովուրդը քաղաքական մեծ զարթօնք սկսեց ապրել, նրա տեսական մտքի լաւագոյն տրադիցիաները նորից վերակենդանացուեցին եւ իրենց ազդեցութիւնն ունեցան նաեւ Առաքելեանի վրայ»[52]։

51. Խ. ԷՐԶՐՈՒՄԵՑԻ, Համառօտական իմաստասիրութիւն Ա. հտ., էջ 661։
52. Հ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ, Հայ փիլիսոփայական մտքի պատմութիւն, Բ. հտ., Երեւան, 1958, էջ 343, 340։ Պրոֆ. Հ. Գաբրիէլեանին հակառակ եւ, միանգամայն, անընդունելի է մեծարգոյ Պրոֆ. Վ. Կ. Զալոյեանի կարծիքը։ Խ. Էրզրումեցին – գրում է Վ. Կ. Զալոյեանը – բոլորովին անտեսում է հայկական աշխարհի անցեալ մշակոյթը եւ նրա փիլիսոփայութեան նուաճումները (Հայ փիլիսոփայութեան պատմութիւն, Երեւան, 1975, էջ 489)։ Գիտնականը իր այս ըստուարածաւալ գրքում ընդամէնը երկու էջ է յատկացնում Խ. Էրզրումեցուն, Մ. Սեբաստացուն եւ Մխիթարեաններին եւ գրեթէ մերժում է հայ փիլիսոփայութեան պատմութեան մէջ նրանց ունեցած դերը...։

Իրապէս «արդարութեան հումանիզմի», քաղքենիական լուսաւորութեան հարցերի շուրջ՝ Խ. Էրզրումեցու պատկերացումները իրենց նախնական անունդն են առանում հայոց դարաւոր փիլիսոփայութիւնից, հանճարեղ Դ. Անյաղթի կենսաճանաչողական ուսմունքից։ Նոր ժամանակների արուեստի, գրականութեան, փիլիսոփայութեան, բնագիտութեան, տնտեսագիտութեան, բարոյագիտութեան, տեսական մտքի պատմութեան հետ կապուած հարցերի մուտքը ուսուցողական բանաստեղծութեան մէջ սկսւում է Խ. Էրզրումեցիով[53]։ Նրա կեանքի ու գործունէութեան, գրական հարուստ վաստակի, մասնագիտական արդարամիտ քննութեան, ուսումնասիրութեան դէպքում չօշափելի կը դառնայ այն խորն ազդեցութիւնը, որ նա կրել է հայ ազգային դասական գիտութիւնից ու փիլիսոփայութիւնից, եւ այն նորը՝ որ նա ստացել է Արեւմուտքից ի նպաստ ԺԸ դարի հայ նոր եւ ընդհանուր վերանորոգութեան շարժման։

ԺԸ դարի նշանաւոր բանաստեղծներից Պաղտասար Դպիրն էր առաջինը, որի քնարական երգերում վեր բարձրացաւ Դաւիթ Անյաղթի տիտանական կերպարը։ «Բազմարդիւն պատիարակ»ը, «վարժապետաց վարժապետ»ը, «այրն իմաստուն եւ փիլիսոփայն», «մեծն քերական», «հմուտ տաղասաց եւ երգահան»ը, «երեւելի պատմագէտ»ը, հայ հրատարակչական գործի «մենտոր»ը[54], Դ. Անյաղթի

53. Այս մասին տես՝ Պետրոս Ղափանցի, Երեւան, 1969, էջ 188–213, 215–220։
54. 1728 թ. Պաղտասար Դպիրը Պոլսում հրատարակում է Սիմէոն Ջուղայեցու Գիրք տրամաբանութեան երկը, ուր վերջում զետեղում է նաեւ՝ Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի Ներգինացւոյ Գիրք Էակաց, որոյ բանք են հարցմունք եւ պատասխանիք ի վերայ տրամաբանական ուսմանց (էջ 254–266), Վինաբանական հարցաբանութիւնքն Մելիտոսի յունաց փիլիսոփային ընդ Աբենականն Մովսէս փիլիսոփայ Հայոց (էջ 267–275), Հաւաքումն Սահմանաց եւ Սահմանապիսեաց, որ ինչ ի սոյն մատենիս գտանին եւ դրութիւնք ցուցակաց ոմանց ցանկորէն շարակարգութեամբ ըստ տառիցն մերոց դասաւորութեանց (էջ 276–291), Ներածութիւն Պորփիւրի (Նոր էջակալոսթեամբ 1–40), Առածք հինգ (էջ 41–50), Նորին Դաւթի Աբենականի հայոց փիլիսոփայի՝ Վասն բաժանման (50–54) եւ վերջում՝ Ցաւելցի եւ առաջիկայս համառօտեալ ի չնչնոյս, ի բանից նոյնոյ Դաւթի սրբոյ փիլիսոփայի ի մեկնութենէ Պորփիւրի, թէ վասն էր հինգ են ընդհանուր ձայնքն եւ ոչ աւելի կամ պակաս (էջ 55–56)։ Երեք տարի յետոյ, 1731 թուականին, Պ. Դպիրը՝ դարձեալ Պոլսում՝ տպագրում է Դաւիթ Անյաղթի Գիրք սահմանաց երկն ամբողջութեամբ, Լուծմունքը եւ Ներբէջ Շնորհալու Լուծմունքի մեկնութիւնը։ Այս հատորում Պաղտասար Դպիրը կրկնում է նաեւ Ս. Ջուղայեցու Գիրք տրամաբանութեան երկին հետ միասին տպագրուած Պորփիւրի Ներածութիւնից սկսուող հատուածներ (1–56) եւ այլն։ Պ. Դպրի

© National Library of Armenia

գրական ժառանգութեան նկատմամբ ցուցաբերում է արտակարգ եւ բազմակողմանի հետաքրքրութիւն: Նա է Դ. Անյաղթի երկերի առաջին գիտական հրատարակիչը, հին փիլիսոփայութեան միտքը Դ. Անյաղթի միջոցով Պորսի միջավայրում տարածողը: Թւում է թէ նրա Համառօտ իմն մեկնութիւն յաղագս տրամաբանութեան ձեռագիր աշխատութեան (Մատենադարանում պահւում են այդ երկի ինը գրչագիր օրինակներ) եւ այլ երկերի մատնագիտական ուսումնասիրութիւնը կը բացայայտի Պաղտասար Դպրի իմաստասէրի դիմագիծը:

Ջանքերով տպագրուած այս երկու գրքերը ըստ էութեան գիտական հրատարակութիւններ են, Դ. Անյաղթի երկասիրութիւնների առաջին ծանրակշիռ տպագրութիւնները: Պ. Դպիրը գրանցում ներդրել է իր հրատարակչական ճաշակն ու շնորհը, կազմել է վերլուծական այբբենական ցանկեր, որոնք այսօր էլ դիւրացնում են ընթերցողի աշխատանքը. «Ծանիր, սիրելի ընթերցող, զի որպէս ի ներքոյ ցանկին հարցմանց գրքոյն ասացաք, յոյժ բարւոք է քեզ քանի մի ինչ անգամ ընթեռնուլ զցանկս առ գիտենալ թէ որքան ինչ կայ հաւաքեալ ի սմա: Զի յորժամ բանի ինչ ի խնդիր ելցես, տեղեակ եւ ծանօթ գտանիցիս թէ գոյ բանն այն ի սմա թէ ոչ: Կամ թէ՝ ո՞ր բան ի յորում տառի եղեալ կայ: Եւ թէ լինիցի երբեմն ոչ գտանել զխնդրելին քո, դարձի՛ր, եւ զայլ ինչ մատ նմին որոնեա, զի նովաւ թերեւս գտցի խնդրելին: Եւ մինչ օգտիցիս անաչխատ գտմամբ, զաշխատօղս ցանկիս Պաղտասար մեղսալի զանձն իմ յիշեսջիր յաղօթս քո եւ ողջ լեր» (Գիրք սահմանաց, Պոլիս, 1731, էջ 335):

«Գիրք սահմանաց մեծին Դաւթի,
Հանուրց գիտնոց յոյժ պիտանի,
Տըպեալ է մեր Թըւականի
Հազար հարիւր եւ ութսունի»

(Նոյն տեղում, էջ 339):

Հայագիտութեան մեծ երախտաւորը թախանձում է ընթերցողին՝ չմոռանալ հրատարակչական գործի մշակներին, յիշել նրանց.

«Տըպել տըւողի գրքոյս,
Մեղօք լըցելոյ հիքոյս,
Զընչին Պաղտասար Դպրիս
Հայցեմ՝ տալ մէկ ողորմիս:

Նաեւ տըպագրողի սորին,
Մահտեսի Աստուածատուրին,
Հանդերձ որդովն Յոհաննիսի
Եւ մըշակիւըն Պետրոսի»

(Նոյն տեղում, էջ 56, նոր էջակալութեամբ):

Մենք երախտագիտութեան խորն համակումով պէտք է կատարենք ՀԸ դարի լուսաւորական շարժման մեծ գործչի պատուիրանը: Ցաւալի է, սակայն, որ «Դաւիթ Անյաղթ» մատենագրական ցանկում (Երեւան, 1980) բոլորովին անտեսուած է Գիրք տրամաբանութեան եւ Գիրք սահմանացի հրատարակչի՝ «Տըպել տըւողի»՝ Պաղտասար Դպրի աշխատանքն ու անունը...:

Պ. Դպիրը ԺԸ դարում Դ. Անյաղթի գրական ժառանգութեան ոչ միայն առաջին հրատարակիչն է, այլ եւ առաջին ներբողագիրը, բանաստեղծ–մեկնիչը, կենսագիրը, զրուցագիրը: Քաջատեղեակ լինելով անցեալ դարերի ձեռագիր մատեաններում մեծ փիլիսոփայի վերաբերեալ կուտակուած նիւթին, նա նոր ժամանակների ընթերցողին ներկայացնում է Դ. Անյաղթի անձ, կուռ կենսագրութիւնը. «Եւ վասն եռամեծին Դաւթի Անյաղթ փիլիսոփայի գիտելի է, զի էր նա ի ժամանակս Վահանայ որդւոյ Մաղնոզի, որդւոյ Վարդանայ... եւ էր Դաւիթ ի գաւառէն Հարքայ եւ գեղջէն Ներգինայ: Եւ այն է գիւղն Ներգինայ երկրին Տարօնայ, ուր Անանիա Շիրակացին զառաւօտու երդերն է ասացեալ» (Գիրք սահմանաց, էջ 36):

Դ. Անյաղթի կենսագրութեանը յարակից Պ. Դպիրը հայ ընթերցողին է ներկայացնում նաեւ մեծ իմաստասէրի շուրջը հիւսուած եւ աւանդութիւնից գրական կեանք մտած զրոյցներից մէկը, որը մենք ներկայացրեցինք վերեւում: Աւանդապատմական նիւթերով համեմուած՝ Դ. Անյաղթի կեանքի ու կենսագրութեան նկարագրից յետոյ, Պ. Դպիրը առաջ է բերում «Դաւիթ» տնտկապով Իմաստասէրին նուիրուած իր բանաստեղծութիւն–ներբողը: Բարձրաշունչ, հանդիսաւոր ոճով, բանաստեղծը ներկայացնում է Դաւիթ Անյաղթի կատարած մեծագոյն դերը ոչ միայն հայոց աղգի, այլ եւ ընդհանուր փիլիսոփայութեան պատմութեան մէջ:

«Դաւիթ Անյաղթ փիլիսոփայ,
Ծաղիկ բուսեալ ցեղինս Հայկայ,
Ծըծեալ զիմաստն ի յԱթենայ,
Գեր քան զՀելլէնսըն ճոխանայ:

Արար ըզԳիրքըս սահմանաց,
Սահմանելով ի վեց դիմաց,
Եցոյց թէ զո՛յ իմաստ մըտաց,
Իմաստուրաց իմաստակաց»[55]:

Պ. Դպրի ներբողեանի առանցքն է կազմում Դաւիթ Անյաղթի «Սահմանք»ի մէջ բարձրացրած վեց հիմնական խնդիրները եւ յատկապէս ընդգծում ամէնից էականը նրա սահմանումների մէջ, թէ «զոյ իմաստասիրութիւն», որով նա, ինչպէս յայտնի է, վճռականօրէն հակադրուել է յոյն իմաստասէր Պիհռոնին եւ նրա հետեւողներին: Պ. Դպիրը անդրադառնում է Դ. Անյաղթի «Զար ոչ է անեղ»

55. Գիրք սահմանաց, էջ 339:

© National Library of Armenia

տեսութեան մեկնաբանութեան հարցին[56], բացայայտելով այն միտքը, թէ մարդկային թոյլ կամքն է չարի արարիչը եւ որ դրա դէմ մաքառելու ամենամեծ զեղամիջոցը գիտութիւնն է, իմաստասիրութիւնը, կրթութիւնը։

Ընթերցողին արմատապէս համոզելու նպատակով – ինչպէս այդ տեսանք Մովսէս Երզնկացու երգերում –, թէ չարը ոչ է գոյ, Պ. Դպիրը առաջին անգամ միջնադարեան բանաստեղծութեան մէջ չափաբերում է Դ. Անյաղթի վերոյիշեալ երկասիրութիւնը.

«Որք բընախօս բանիւ զէտկս ենթադրեցին,
Ամենայն չար գոյ տանջելի ճշմարտեցին.
Ո՛չ ոք տանջեալ անապական վերարերին,
Զի յեղյեղուկ է բընութեամբ ըստ իւր գոյին...

Ըստ բընութեան ո՛չ ոք է չար եւ ո՛չ լինին,
Եւ զի չարն է առարկութիւն որ փոփոխին,
Առարկութիւն գոյացութիւն ո՛չ է բնաւին,
Ուրեմն, ապա, գոյացութիւնք չար ոչ ասին»[57]։

Բնախօսները կամ նրանք, որոնք զբաղուել են իրերի, գոյի էութեան քննութեամբ ու նկարագրութեամբ, այն ճշմարիտ եզրակացութեանն են յանգել, թէ չարը գոյացութիւն չէ։ Գոյացութիւնները չար չեն լինում. չարը առարկայի որակն է, յատկանիշը, որ ստանում է դրսից. չարը ենթակայ է փոփոխութեան. ոչ ոք էութեամբ չար չի ծնւում, այսինքն՝ անարդար բարքերի ու յարաբերութիւնների մէջ է մարդը չար դառնում. հետեւաբար չարը մերժելի է, տանջելի, անհանդուրժելի։ Բարին չարի հակադրութիւնն է եւ ոչնչով հաւասար չէ նրան, ներհակութիւնները հաւասար չեն լինում, բացայայտում է Պ. Դպիրը՝ Դ. Անյաղթի վերոյիշեալ երկասիրութեան էութիւնը.

«Որք ներհականք ոչինչ իրօք հաւասարին,
Որպէս ճերմակն ոչ ունին ինչ անգէտ սեւին.
Արդ, բարութեան գոյացութիւն անեղն ասի,
Բայց յանեղէն եղականաց ոչ պատկանի։

56. «Ըզբան եռամեծին Դաւթի,
Թէ ամենայն չար տանջելի,
Որիւք չափեալ ըստ իւր ըզձի,
Ուրումըն այս բանասիրի»։
(Գիրք սահմանաց, էջ 321)։

57. Գիրք Սահմանաց, էջ 319։

Քանզի բարի թէպէտ բազմաց ոգեալ լինի,
Բայց բարութիւն հազիւ կամ բնաւ ոչ ենթադրի,
Իսկ բարւոյն չարն է ընդդիմակ, որ ներհակի,
Ապա ուրեմն, ոչինչ ի յայն այս գըտանի»[58]։

Յայտնի է, որ գիտա-ճանաչողական բանաստեղծութիւնը ընթերցողին դեղարուեստական բաւականութիւն կամ հաճոյք պատճառելու խոստումներ չի անում։ Նրա դերը գերազանցապէս ուսուցողական է, ոտանաւոր ձեւի եւ չափի, յանգի ներդաշնակութեան մէջ, պարզից ամենաբարդ գաղափարների դիտելիքների հրամցումը։ Սակայն, բնականաբար, գիտա-ուսուցողական բանաստեղծութեան այն հեղինակները, որոնք օժտուած են բանաստեղծական բնատուր շնորհով, ինքնաբերաբար ստեղծում են նաեւ քնարական արուեստով գեղեցիկ եւ ազդու ուսուցողական երգեր։ Վարդան Հայկազնի, Ներսէս Շնորհալու, Մովսէս Երզնկացու, Սմբատ Գունդստաբլի եւ այլոց Դաւիթ Անյաղթին նուիրած բանաստեղծութիւնները, ինչպէս նկատեցինք, սոսկ ուսուցողական երգեր չեն։ Այդպիսի մի գեղեցիկ բանաստեղծութիւն է մեզ թողել նաեւ Պ. Դպրին ժամանակակից Մեսրոպ Գանձակեցին։

Մեսրոպ Գանձակեցին ԺԸ դարի անյաղթաբանութեան երկրորդ ուշագրաւ դէմքն է Պաղտասար Դպրից յետոյ։ Ձեռագրերում եւ ձեռագրական ցուցակներում նա յայտնի է նաեւ՝ Մեսրոպ Աղուանցի, Մեսրոպ Դպիր, Երէց, Սարկաւագ, Քահանայ, Վարդապետ, Հռետոր, Իմաստասէր եւ այլ անուններով ու կոչումներով։ Դաւիթ Անյաղթին նուիրուած այն բանաստեղծութիւնը, որով նա գրաւում է մեր ուշադրութիւնը, կրում է «Հին Զուղայեցի Ստեփանոս Վարդապետի յաշակերտէ առ Դաւիթ Անյաղթ փիլիսոփայն հայոց» խորագիրը։ Մեզ յայտնի է այդ բանաստեղծութեան ձեռագիր մէկ ընդօրինակութիւն, որը պահպանուում է Մաշտոցեան Մատենադարանի թիւ 1745 գրչագրում։ Այս ձեռագիրը ամենայն մանրամասնութեամբ նկարագրել է Յ. Մանանդեանն իր «Ցուցակն դպրոցը» յայտնի աշխատութեան մէջ։ Անուանի գիտնականը նկարագրութեան մէջ ներկայացնում է նաեւ բանաստեղծութեան առաջին եւ վերջին տողերը՝ նպատակ չունենալով անդրադառնալու երգի հեղինակի հարցին։ Բանաստեղծութիւնը, տողերի յօդակապով՝ «ի Մեսրոպէ է բանս», յայտնում է հեղինակի անունը։ Դժբախտաբար կենսագրական տեղեկութիւններ, այդ անխոնջ գիտնականի վերաբերեալ, գրեթէ յայտնի չեն։ Սակայն, թարեբախտաբար, իմաստասիրական, գիտական բովանդակութեամբ մի շարք գրչագրերում պահպանուում են ուշա-

58. Գիրք Սահմանաց, էջ 320։

© National Library of Armenia

գրաւ փաստեր, որոնք քիչ թէ շատ գաղափար են տալիս նրա գրական, գիտական գործունէութեան մասին։ Դ. Անյաղթին նուիրուած վերոյիշեալ ներբողեանը մեզ հասել է այն ձեռագրով, որը Մեսրոպ Գանձակեցու ջանքերով վերստեղծուել, վերակազմուել է։ Դա «Սահմանք»ի ԺԳ դարի մի հին, քայքայուած, թերթերը թափուած, մի կողմ նետուած ձեռագիր է եղել։ Եւ ահա, Մ. Գանձակեցին 1733 թուականին Էջմիածնի մատենադարանում ձեռնամուխ է եղել նրա վերանորոգութեան, վերակազմութեան աշխատանքին, իր դրչով լրացրել է պակաս էջերը եւ փրկել ձեռագիրը փոշուց։ Նկատենք, որ դա հէնց մեծանուն գիտնական Յ. Մանանդեանի նկարագրած ձեռագիրն է։ Ձեռագրի յիշատակարանում Մ. Գանձակեցին գրում է. «Ես նուաստ եւ անպիտանս ամենայնի, Մեսրոպ սուտ անուամբ սարկաւագ, որ ոչ առնեն արժանի զիս մեղօք մածեալս աշակերտութիւն այպիսի իմաստից... Քանզի իմ նայելով զայս Գիրքս Սահմանացն Դաւթի՝ ցրուեալ կայր իբր անպիտան, եւ ես բաղում աշխատանօք իրար ձգեցի եւ պակասն գրեցի, սակս վայելման անձին իմոյ... Գրեցաւ Ռ.ՃԶԲ թուին Հայոց, ապրիլի ամսոյ Ը ի դրան մեծի վեհարանիս սուրբ Էջմիածնի»[59]։ Մեսրոպ Գանձակեցին նպատակ է ունեցել «Սահմանք»ի հնագոյն այդ օրինակի վերակենդանացումը, ձեռագրի նոր կեանքը նշանաւորել Դ. Անյաղթին նուիրուած մի բանաստեղծութեամբ։ Մ. Գանձակեցու «սակս վայելման անձին իմոյ» արտայայտութիւնը՝ կարծէք թէ դրաւականն է նրա յետագայ գործունէութեան։ Էջմիածնում եւ այնուհետեւ Իզմիրում, Պոլսում, Բրուսայում զբաղուել է փիլիսոփայութեամբ։ 1730ից 1760ական թուականներին Մ. Գանձակեցու ջանքերով եւ նրա դրչութեամբ իրար յետեւից ձեռագրական աշխարհ են մուտք գործում եւ տարածւում իմաստասիրական մի շարք կարեւոր գործեր. «Համառօտ մեկնութիւն առածիցն Դաւթի փիլիսոփայի, արարեալ ի տառապեալ Մեսրոպայ Գանձակեցւոյ, ի խնդրոյ ուրումն ուսումնասիրի Սեթայ սարկաւագի Երզնկացւոյ»։ «Համառօտ մեկնութիւն գրոցն, որ կոչի Պատնառաց՝ Արիստոտէլի կամ որպէս թուի ոմանց Պրոկղի»։ «Դարձեալ հարցմունք պէսպէս եւ պատասխանիք մեկնութեանս գեղափար մեզ շնորհօղ տեառն Մեսրոպայ գերիմաստ հռետորի եւ կրօնաւոր վարդապետի»։ «Ժողովեալ ի Մեկնութենէ Կաթողիկեայց Սարգսի Շնորհալւոյ, այլ եւ միաւորեալ ըստ գրոց մերոցն վարդապետաց՝ Որոտնեցւոյ, Գրիգորիսի Աղթամարցւոյ եւ Մատթէոս վարդապետի, ձեռամբ տառապեալ Մեսրոպայ Գանձակեցւոյ» եւ այլ աշխատութիւններ։ Իր մեկնութիւնների կամ պարզաբանութիւնների, ինչպէս նաեւ ընդօրինակութիւնների յիշատակարաններում Մ. Գան-

59. Մատենադարան, ձեռ. թ. 1745, թերթ 115։

ձակեցին յայտնում է ուշագրաւ բանասիրական տեղեկութիւններ, որոնք օգտակար են ոչ միայն դարի հայ փիլիսոփայական մտքի պատմութեան, այլ եւ իրեն՝ հեղինակի կեանքի եւ գործունէութեան ուսումնասիրութեան համար։ Մեկնողական աշխատանքի մէջ, նկատում է Մ. Գանձակեցին, առաջ բերելով Դաւթի Անյաղթի կարծիքը, մեծ չափով դրսեւորւում են նաեւ իրեն՝ մեկնողի փիլիսոփայական հայեացքները, մեկնողի անհատական վերաբերմունքը տուեալ գործի նկատմամբ, քանզի «ըստ իւրում կարծեաց ձեւացուցանէ»։ Ուստի Մ. Գանձակեցին եւս իր մեկնութիւնների հիմնական նպատակն է համարում, որքան հնարաւոր է, տուեալ երկի հիմնական գաղափարները բացայայտել ընթերցողի համար պարզ, մատչելի եղանակով։ Այսպէս օրինակ, նա դժուարամարս եւ խճողուած է համարում 1750 թուականին Պոլսում հրատարակուած «Գիրք պատճամարում 1750 թուականին Պոլսում հրատարակուած «Գիրք պատճառաց» երկը (լատիներէնից հայերէնի թարգմանուած Ստեփանոս Լեհացու կողմից). ուստի ձեռնամուխ է լինում այդ երկի նոր շարադրանքին. «յայտ ընդի ուսումնասիրողացդ – գրում է Մ. Գանձակեցին իր Մեկնութեան «Սա բարեմիտ ընթերցողդ» առաջաբանում –, զի ասէ մեծն Դաւիթ Անյաղթ փիլիսոփայն ի մեկնութիւն վեց գլուխն Պորփիւրի, թէ պղատոնական տեսութիւնք դժուարք են եւ խորինք, զամենայն կարծիս հուլ անկեալք, եւ զի այսպէս գոյ՝ յայտ է, զի ամենայն մեկնող ըստ իւրում կարծեաց ձեւացուցանէ։ Նոյնպէս եւ մեք – շարունակում է Մ. Գանձակեցին –, ըստ կարողութեան մերոյ, այսպէս ձեւացուցաք զմեկնութիւն սորա, առաջնորդութեամբ սուրբ եւ ուղղափառ վարդապետաց մերոց հայկազանց. վասն զի, ի թուին Հայոց հազար երկու հարիւր եւ երկուցն, ես տառապեալ Մեսրոպ՝ անարժան քահանայ եւ կրօնաւոր, եկի ի մեծ քաղաքն Կոստանդնուպօլիս եւ տեսի զգիրս զայս Պատճառաց տպագրեալ, բայց յաղագս նրբութեան սորա եւ դժուարիմաց գոլոյն, սակաւ թէ ոք ստանայր զնա, վասն որոյ ստիպեալ եղէ յեղբարց ոմանց ուսումնասիրաց դիւրացուցանել զտեսութիւն սորա ընթերցողաց... են բիւրք կերակուրք ի վերայ յերկրի – շարունակում է Մ. Գանձակեցին, ներուումն հայցելով իր սխալների համար – եւ ոչ ոք ի նոցանէ բրոնութեամբ մտանէ ի բերան, ասէ մերն Վանական Վարդապետն. նրմանապէս եւ սա կամողացն է եւ թէ զոգի ինչ ի տմա ըստ վամաց ձերոց, Տեառն շնորհօք եւ աշխատաւորացն մերոց, իսկ պակասն եւ անյարմարն իմում տկարութեանս է, ներել մաղթեմ զայն...»[60]։ Մ. Գանձակեցին 1754 թուականին եղել է նաեւ Բրուսայում եւ այնտեղ է աւարտել «Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի Ներածութիւն Պորփիւրի» երկի իր մեկնութիւնը։ Անդրադառնանք տակայն Մ. Գանձակեցու

60. Մատենադարան, ձեռ. թ. 1848, թերթ 164։

© National Library of Armenia

մեզ հետաքրքրող բանաստեղծութեանը միայն, որ առիթ տուեց ինչ որ չափով ճանաչելու նաեւ նրա փիլիսոփայ հեղինակին։

Մ. Գանձակեցու «Հին Զուղայեցի Ստեփանոս վարդապետի յաշակերտէ առ Դաւիթ Անյաղթ փիլիսոփայն Հայոց» խորագրով բանաստեղծութիւնը 13 քառատողերից բաղկացած մի հաղուագիւտ ներբող է, իմացաբանական, փիլիսոփայական բովանդակութեամբ՝ ուսուցողական, ճանաչողական մի երգ։ Այստեղ մարմնաւորւում են մեծ իմաստասէրի կեանքի ու գործունէութեան մի շարք պծեր։ Բանաստեղծը բնութագրում է Դ. Անյաղթի դերը՝ իբրեւ հայ փիլիսոփայական մտքի պատմութեան առաջնորդի, իբրեւ հին աշխարհի իմաստասիրական շնորհները, «տարածածկեալ», «դժուարին» գաղափարները բացայայտողի, թարգմանչի, իբրեւ հայոց ազգի ուսուցչի ու փիլիսոփայի.

«Սապէս եղեալ հօրըդ մերոյ սրբազան
Լուսաւորիչ կրկին ցեղին հայկազեան,
Իմաստական տառիւք հընդօք զանազան,
Պերճացուցեր զմեզ գիտութեամբ մեծազան։
Բամեալ առ քեզ գումարեցեր քաջ արանց,
Ուշիմամիտ ներբահայեաց գերազանց,
Որովք լցեր փափաք սրտին տուրբ հարանց,
Լընանելով բերին նոցա թարգմանմանց։
Ոռոգելով ջուր արբուցեր բուսուցիչ,
Բանիւ քոյին տրգէտ որդւոցս ուսուցիչ,
Մառախլապատ փակեալ մրոտաց մեր լուծիչ,
Ցըստասառոյց սրտից մերոյ ջեռուցիչ»[61]։

Ուշագրաւն ու առանձնայատուկն այն է, որ այս եւ նման երգերով ԺԸ դարի գրաւոր բանաստեղծութեան նիւթն ու պատկերային համակարգը վերափոխւում, հարստանում է։ Պ. Դպրի, Պ. Ղափանցու եւ այլոց ներբողեաններում՝ ազգի, հայրենիքի, ազատութեան պաղափարների, սիրոյ եւ կարօտի տենչանքներն արտայայտող պատկերների հետ միասին, հանդիպում ենք գիտութեան, փիլիսոփայութեան աշխարհականացման իրական ընթացքը ներկայացնող, հանճարեղ Դ. Անյաղթի կերպարը մարմնաւորող պատկերների, այն ինչ տեսանք ԺԲ–ԺԴ դարերի բանաստեղծութեան մէջ։

«Պարտիզանման ծաղկայոլով բուրաստան,
Հօտ շատունակ ըստ շուշանի բուրեցան,
Գարնանաբոյս փունջ մանուշակ մեզ տրւան,
Բուրմամբ հոտոյ ճաշակ մրոտաց մայլեցման։

61. Մատենադարան, ձեռ. թ. 1745, թերթ 2ա–բ։

Էկիր մրտեր ի պատերազմ ըստ քաջի,
Արքայակերտ մեծ քաղաքին Կոստանդի,
Դեղըն մահու, որ ծածկեալ էր բաժակի,
Ցանդիմանեալ ցուցեր չարին Լեւոնի։
Բանք քո մաքուր յոյժ պատուական քան զոսկի,
Գետաքանդակ հոսեալ ի քէն ատենի,
Ծածկեալ կորոյց թիւր իմացողն այլազգի,
Այն, որ անուամբ Վէճ Մելիտոս յորջորջի»[62]։

Պատկերների իւրակերտ հիւսուածքի մէջ կերպարանք են առնում աւանդական, գրական զրոյցներով մեզ հասած Դ. Անյաղթի կեանքի ու գործունէութեան բազմաթիւ հետաքրքրական էջեր. Ա-թէնքի իմաստասէրների մրցոյթում նրա տարած յաղթանակի պատմութիւնը, Դաւիթ Անյաղթի ու Մովսէս Խորենացու՝ Մելիտոսի հետ կատարած իմաստասիրական վիճաբանութեան անցքերը եւ այլն, որոնք մեզ ծանօթ են ԺԲ–ԺԴ դարերի գրական զրոյցներից։ ԺԸ դարի փիլիսոփայ Մ. Գանձակեցու վերոյիշեալ ներբողը հայոց նոր եւ ընդհանուր վերանորոգութեան շարժման, հայ ժողովրդի ազգային ինքնաճանաչման ու ինքնահաստատման ձգտումների գրական արձագանգն է։

«Նախնի հարանց մերոց պըտուղ գերակայ,
Հիւսեալ ծաղկանց պատուականաց յարակայ,
Թագ եւ պըսակ գլխոյն եղեալ Թորգոմայ,
Մեծըդ Դաւիթ, պարծանք ազգիս մեր Հայկայ»[63]։

Մ. Գանձակեցու այս բանաստեղծութիւնը, միաժամանակ, հին եւ նոր դարերի մտաւոր զարթօնքի՝ ԺԵ–ԺԴ դարերի հայ վերածնդի եւ ԺԷ–ԺԸ դարերի հայ վերանորոգութեան շարժման միասնացած շունչն ունի իր մէջ։

Սակայն, ինչպէս արդէն նկատեցինք, ԺԸ դարի փիլիսոփայական բանաստեղծութեան, եւ առհասարակ ողջ միջնադարեան գիտական, իմաստասիրական բովանդակութեամբ երգերի հիմնական մասը ուսուցողական, ճանաչողական արժէք ու նշանակութիւն ունեն։ Կրթութիւն, լուսաւորութիւն, դա՛ էր հայոց մաքառողական շարժման հիմնական նախապայմանը, այն ապեղանին՝ որ կարող էր փակել հայոց դարաւոր քաց վէրքերը։

Պէտք էր յետադարձ քննական լայն հայեացք նետել հայոց անցեալին, վերականգնել անցած դարերի մաքառողական պայքարի ո-

62. Նոյն տեղում, թերթ 2բ–3ա։
63. Մատենադարան, ձեռ. թ. 1745, թերթ 3ա։

© National Library of Armenia

ճը։ Վաղուց ի վեր չկային անցած ժամանակների առատաբուխ գիտունները, վարդապետները, չկար նրանց հոգեզմայլ ուսուցումը, դառնացած բողոքում է Սիմէոն Երեւանցին, իր «Լուծմունք Նեռածութեանն Պորփիւրի, Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Ե առածիցն» երկի առաջաբանում. «Գրեթէ միանգամայն սպառումն եղեւ ամէնից երջանկութեանց և յաճախութիւն ամէնից թշուառութեանց։ ... Արդ, եւ իմ պատահեալ այսմ վատաբախտի ժամանակիս, մինչ տեսանէի վտարամերժումն գիտութեանցն արտաքնոց յազգէս մերմէ, ոչ սակաւ հասանէր տագնապ ի վերայ իմ եւ մանաւանդ հարկադրութիւն ուսումնասիրաց եղբարց եւ հարազատից, որ ստէպ ստէպ ստիպեալ մտրակէր զհեղգս առ ի արիանալ եւ հոգալ սակաւ այսոցիկ գրոցս եւ շարադրութեանցն դժուարամտից... համարձակեցայ առնել զլուծումն ոմանց գրոց... այսինքն՝ Ներածութեան Պորփիւրի, Տասանց Ստորոգութեանցն Արիստոտէլի, Նորին Պէրիարմենիաս գրոցն, որ Յաղագս Մեկնութեան լսի, եւ Հնգից առածիցն Դաւթի Անյաղթի փիլիսոփային, նաեւ իւրաքանչիւրոց երից գրոցն մեկնութեանց Դաւթի արարեցելոց դժուարամիտ բանս եւս լուծեցի, ըստ կարի իմում... եւ ի յօգուտ ազգիս արամեան եւ ի զուարճութիւն ուսումնասիրաց մանկանց»[64]։

ԺԸ դարում հայոց մէջ աշխարհիկ գիտութեան ծարաւը առաւել քան սատկանում է։ Դպրոցներում արտաքին գիտութիւնների դասաւանդման վիճակը բարելաւելու նպատակին էին նուիրաբերում իրենց ուժերը մտաւոր մարզի նշանաւոր գործիչներ՝ Ի. Էրզրումեցին, Մ. Սեբաստացին, Պ. Դպիրը, Յ. Նալեանը, Պ. Նախիջեւանցին, Ղ. Զահկեցին, Ս. Երեւանցին, Յ. Շահամիրեանը, Յ. Շմաւոնեանը, Թադ. Զուղայեցին եւ այլք։ Նրանք, ինչպէս նկատեցինք վերեւում, մեկնաբանում, պարզաբանում, տպագրում են Դ. Անյաղթի եւ այլոց իմաստասիրական երկերը, գրում են տրամաբանութեան, ճարտասանութեան, քերականութեան եւ այլ առարկաների վերաբերեալ նաեւ ինքնուրոյն երկեր, կազմում դասագրքեր։ Ահա այս երկերն են նաեւ, որ նպաստում են ԺԸ դարի իմաստասիրական, ուսուցողական բնոյթի բանաստեղծութեան զարգացմանը։ Դ. Անյաղթի եւ այլոց իմաստասիրական ինքնուրոյն եւ մեկնողական երկերի ձեռագիր ընդօրինակութիւնների ու հրատարակութիւնների էջերում մենք հանդիպում ենք փոքրածաւալ՝ երկտող, քառատող, ութ կամ տաս տողանի բանաստեղծութիւնների, որոնցով հայ ընթերցողը որոշակի պաղափար է կազմում՝ թէ՛ գիտական, իմաստասիրական տուեալ երկի բովանդակութեան եւ թէ նրա հեղինակի մասին։ Գիտափիլիսոփայական բովանդակութեամբ փոքրիկ բանաստեղծութիւնների

64. Մատենադարան, ձեռ. թ. 1917, թերթ 4բ։

մի ամբողջ շարք կարող են կազմել Պ. Դպրի, Պ. Ղափանցու, Պ. Նախիջեւանցու եւ Ս. Երեւանցու երկտող, քառատող բանաստեղծութիւնները.

«Լեր իմաստուն կամ հետեւող իմաստնոց,
Կալով ի բաց ի մարդակերպ անասնոց,
Զի գիտութիւնն է իմաստնոց ճառագայթ,
Տգիտութիւնն՝ անիմաստից որոգայթ»։

* * *

«Հաւաքումն սահմանաց,
Հանգստութիւն սերտողաց,
Նաեւ այլ ինչ պիտանի,
Թըւումն իակոյն գտանի»[65]։

* * *

«Եթէ ըղձանաս լինել տրամաբան,
Լեր միշտ հետեւող գիտնոցըն վարժման»։

* * *

«Իմաստութեան տուր ըղձիրտ քոյ,
Իսկ հանճարով՝ միշտ փայլեցո՛»[66]։

* * *

«Մի՛ նըմանիր դու անբանից,
Այլ եւ նոցին նըմանեաց,
Լե՛ր հետեւող իմաստութեան
Եւ իմաստնոց նըմանեաց»[67]։

Յայտնի է, որ միջնադարեան բանաստեղծութեան մէջ շատ են յիշատակւում յատկապէս Հոմերոսի եւ Աղեքսանդր Մակեդոնացու անունները։ ԺԸ դարում, ահա, գրանց հետ միասին մենք հանդի-

65. ՊԱՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղիկներ սիրոյ եւ կարօտանաց, հրտ. Շ. Նազարեան, – Ա. Մնացականեան, Երեւան, 1958, էջ 259։
66. ՍԻՄԷՈՆ ԶՈՒՂԱՑՑԻ, Գիրք տրամաբանութեան, Պոլիս, 1728, էջ 233, 235։ Այստեղ եղած բանաստեղծութիւնները պատկանում են Պ. Դպրի գրչին։
67. ՊԵՏՐՈՍ ՂԱՓԱՆՑԻ, հրտ. Շ. Նազարեան, Երեւան, 1969, էջ 351։

© National Library of Armenia

պում ենք նաեւ Արիստոտէլի, Պորփիւրի, Պղատոնի, Պիհռոնի, Մելիտոսի եւ այլոց նուիրուած առանձին, փոքրիկ երկտող եւ քառատող բանաստեղծութիւնների. այդպիսի օրինակներ մեզ յայտնի չեն անցեալից.

«Պորփիւրոս բընախօս էր փիւնիկեցի,
Աշակերտ հմտագոյն Պըղոտինոսի»[68],

գրում է Պ. Դպիրը՝ Դ. Անյաղթի Պորփիւրի ներածութեան առթիւ:

«Այսքան վիճմունք Մելիտոսի,
Տրամաբանեալ ընդ Մովսէսի,
Զորս Մելիտոս հարցաբանէր,
Արին Մովսէս պատասխանէր»[69],

գրում է դարձեալ Պ. Դպիրը՝ հայ ընթերցողի մէջ ընդմիշտ տպաւորելու համար Մ. Խորենացու եւ Մելիտոս իմաստասէրի միջեւ տրամաբանութեան հարցի շուրջ եղած վիճաբանութեան պատմութիւնը: Դարի ուսուցողական բանաստեղծութիւնը արտացոլում է պատմական այն ճշմարտութիւնը, թէ հայութեան կրթական օջախներում խորն ընդունելութիւն են գտել յոյն փիլիսոփաների, յատկապէս Պորփիւրի փիլիսոփայական հայեացքները: Սիմէոն Երեւանցին յորդորում է մտածել, լինել Պորփիւրի նման. «միշտ գոլ պորփիւրապէս», քանի որ նրա փիլիսոփայութիւնը արտաքնապէս իր սահմաններն ունի, իսկ ներքնապէս՝ անհուն է ու անսահման:

«Արդ, Պորփիւրոսս ապա չնորհալի,
Գոլով համայն իմաստիւք լի,
Արար ըղձայնըս հնդեսին,
Կարճ(ա)ռօտ բանիւք նաեւ դիւրին:
Վերերեւոյթքն են հունապէս,
Ներերեւոյթքն անհունապէս,
Ապա մատչողաց յայս հանդէս,
Պարտ է միշտ գոլ պորփիւրապէս»[70]:

Ս. Երեւանցին իր Համառօտ լուծմունք գրոցն Դաւթի, որ կոչի գոյից բաժանումն դրքի հետ կապուած աշխատանքն նշանաւորում է Արիստոտէլին նուիրուած 12 տողանոց մի բանաստեղծութեամբ, ուր խրատում է հայ ընթերցողին խորամուխ լինել Արիստոտէլի գոյացութեան հարցերի վերլուծութեան մէջ.

68. Ս. ԶՈՒՂԱՅԵՑԻ, Գիրք տրամաբանութեան, էջ 40 (Նոր էջակալութեամբ):
69. Նոյն տեղում, էջ 275:
70. Մատենադարան, ձեռ. թ. 1826, թերթ 72ա–բ:

«Արիստոտէլ միտն անզբաղ,
Բանասիրաց համեմիչ աղ,
Զընթրիս չնորհալիս կազմէ,
Եւ զմիտըս պարզս հրաւիրէ:

Ի յայս թէպէտ յոլովք բազմին,
Բայց սակաւք են, որք զմայլին,
Զի, որոց ոչ գոյ զմիտ պարզեալ,
Ցարտաքս հանցին մերկ եւ քաղցեալ:

Զի սա մտաց է զմայլելի,
Ոչ թէ մարմնոց գիշակերի,
Ուրեմն որ յայս ընթրիս բազմի,
Ցարմար կոչ նա ատեան պարտի»[71]:

Պետրոս Նախիջեւանցին Արիստոտէլի «Վերլուծութեան» (Դաւթի մեկնաբանութեան հիման վրայ) իր մեկնութիւնը աւարտում է «Պետրոս» յոգնակապով մի բանաստեղծութեամբ, ուր այդ երկը դիտում է իբրեւ «շաւիղ ճշմարտութեան», «ատող վերուղղական», մտքի, գործի ուղեցոյց, տարակուսանքների փարատիչ.

«Պայծառութիւն մըտաց մարդկան,
Երբորդ հատորն վերլուծական,
Տարփացողաց գոլ տրամաբան,
Բամից վնու գարդար բաղձան:
Ուստի ի յերկիս սորին երկան,
Սիրով լծեա՛ զքեզ դիր եւ ջան,
Զի սա է ատող վերուղղական,
Ցայնց որք ի ծովս կարծեաց ծփան,
Ուղղէ ըզմիտս թափառական,
Ցուղղիչ շաւիղ ճշմարտութեան:
Լեր ցանկացող գեղոյ տրայն,
Հարսնացո՛ քեզ անլուծական,
Զի յամենայն տարակուսան,
Ինչէ գործի քեզ լուծական»[72]:

Պ. Նախիջեւանցին՝ Դ. Անյաղթի Արիստոտէլի «Վերլուծութեան» մեկնութեան հետ կապուած իր քննական աշխատանքի առիթով բնամեկնութեան հետ կապուած իր քննական աշխատանքի առիթով դիտական ուշագրաւ կարծիքներ է յայտնում: Նա ցաւում է, որ հայ իմաստասէրները իրենց ձեռքի տակ չունեն Արիստոտէլի այդ հանրագիտարանները, ինչպէս նաեւ Դաւթի, Ամոնիոսի, Սիմպլիկիոսի, Եղիայի, Ստեփանոսի, Պղատոնի, Պիհռոնի, Մելիտոսի, Պորփիւրի, Գալենոսի, Ալեքսանդրի, Ամոնիոսի, Ստեփան

բայայտ երկի հեղինակային քնադրի թարգմանութիւնը: Այդ հանդամանքը, ըստ նրա, դժուարացնում է երկի նոր մեկնիչների գործը, առանձին հարցերի շուրջ նրանց ազատ ու աներկմիտ քննական վերլուծական աշխատանքի խնդիրը: Այդ պատճառով, ահա, Պ. Նախիջեւանցին դերադասում է շրջանցել «Վերլուծութեան» մեկնութեան տարակուսելի կէտերը, քան թէ «յանդգնարար լուծել». «մտանեմք ի սոյն հանդէս – գրում է նա՝ «Սա աղդեցութիւն ինչ, առ խոհական ընթերցողս» առաջաբանում – միանգամայն զվերծանօղդ մաղթելով, զի իբր տեղեակ կարեաց գոլ ձերովդ խոհականութեամբ զթերին լցուցանել սովիմբ, ակն կալջիք մինչեւ բովանդակ վերլուծական գիրքն Արիստոտէլի շնորհօք Հոգւոյն Սրբոյ եղիցի ի մեր լեզու: Եւ յայնժամ դարանեալ տարակուսանքն սորին լաւապէս ի յայտ դան: Քանզի որ զդործքն ձեռնարկիցէ լուծանել՝ պարտի ունել զհեղինակն առընթեր, զոր ոչ ունելով մեր՝ ընդ այսպիսի տեղիս հանդիպելով անցանեմք, քան յանդգնարար վճռելով»[73]:

Դ. Անյաղթի անձին եւ դործի շուրջ ստեղծուած վերոյիշեալ երդերով միայն չեն որոշւում նրա փիլիսոփայութեան աղդեցութեան ոլորտները: Մեծ իմաստասէրի բարոյագիտական, ճանաչողական հայեացքների ընդհանուր աղդեցութիւնը ակնբախ է նաեւ ԺԸ դարի դրական–քնարական բանաստեղծութեան վրայ: Դ. Անյաղթի «Նմանութիւն Աստուծոյ ըստ կարողութեան մարդկան» նոր–պլատոնական, ճանաչողական հայեացքը, աստուածանմանութեան խնդիրը, որն այնքան խորն ներդործութիւն է ունեցել Գր. Նարեկացու բանաստեղծական հանճարի վրայ եւ այնքան մեծ հետք թողել՝ միջին դարերի հայ դրականութեան մէջ, արտայայտւում է նաեւ ԺԸ դարի վերանորոգութեան շարժման դործիչների երկերում: Ամենակատարեալի օրինակով մարդուն կատարելութեան հասցնելու, բանական էակի զդացական եւ այլ յատկութիւնների, հոգու եւ մարմնի յարաբերութիւնների չափը որոշելու, իրերի աշխարհը ճանաչելու, հասարակութեան մէջ մարդու տեղը ճշտելու դաւթեան եւ նարեկացիական հայեացքները ԺԸ դարում վերարծարծւում են իւրովի...: Այս երեւոյթը, որ թխում էր պետականազուրկ հայ ժողովրդի դարաւոր կեանքի ընթացքից եւ համախոհ ու ներդաշնակ էր նաեւ ժամանակակից ներքին կեանքի (ազդային–դաղափարական, լուսաւորական պայքարի) ընդհանուր ոգուն, արտայայտւում է նաեւ դարի դրական բանաստեղծութեան մէջ: Ճանաչողական–իմացական վերարթնացող ուսմունքը (կեանքի դործնական պահանջների, իրական յարաբերութիւնների թելադրանքով) դառնում է մի օղակ, որով միաւորւում են ԺԸ դարի հայ հասարակական մտքի տարբեր թեւերի, տարբեր դա-

73. Մատենադարան, ձեռ. թ. 1826, թերթ 298ա:

ւանանքների առաջադէմ ներկայացուցիչները, աղդին, հայրենիքին նուիրուած մարդիկ (Խ. Էրզրումեցի, Մ. Սեբաստացի, Յովհ. Կոլոտ, Պ. Դպիր, Յ. Նալեան, Պ. Ղափանցի, Ս. Երեւանցի, Պ. Նախիջեւանցի, Յովսէփ Էմին, Շահամիրեաններ, Թադ. Զուղայեցի, Յ. Շմաւոնեան եւ այլք): Բանականութիւն, բանականութիւն, գացադանչում է ազատադրական պայքարի դործիչ Յովսէփ Էմինը, հայ հասարակական մտքի շարժիչ ուժերի՝ հոգեւորականութեան, առեւտրական դասի եւ ժողովրդի ուշադրութիւնը բեւեռելով ազդային ինքնագիտակցութեան հարցի վրայ: Ճշմարիտ քրիստոնեան նա է – հաւաստում է հրապարակախօսը – ով չի համակերպւում, ով մաքառում է, ով չի կարծում թէ մահմետականութեան տիրապետութիւնը յաւիտենական է: Աստուած բոլորին միատեսակ եւ հաւասար է ստեղծել: Մարդիկ բանական էակներ են եւ հէնց այդ պատճառով ոչ ոք էլ չպէտք է միւսի ստրուկը լինի: Մի բանական էակ իրեն չէր հանդուրժի ինքնայօժար ստրուկ լինել ուրիշներին[74]: Նոյն գաղափարն է ընկած Շահամիրեանների քաղաքական ծրագրի հիմքում: Հայոց պետականութեան անկման պատմական պատճառներին անդրադառնալով՝ «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» նշանաւոր դրքի հեղինակը, մէջբերելով Դ. Անյաղթի «Զարն ոչ է անեղ» յայտնի բանաձեւից համապատասխան քաղուածքներ, կոչ է անում ժամանակակից հայութեանը միասնաբար, մեր նախնիների հերոսական կեանքի պատմութիւնը աչքի առաջ ունենալով, դիմադրելու չարին, թշնամուն և դիտութեան, լուսաւորութեան ճանապարհով հասնելու բաղձալի ազատութեան[75]:

«Օ՜ն, ասելով եկայք, եւ մեք խոյաբար հետեւեցուք մերոց
հարցն եւ նախնեաց,
Որք որպէս վառեալ շահատակելով վրէժս առին յար
յիւրեանց թշնամեացն,
Զառ ի անքոյթ միշտ եւ անսասան երկիրս պահելոյ
իւրեանց ազդացն եւ ընտանեացն...
Մինչեւ ցե՞րբ զքրտեան արեան վաստակս մեր թողուցումք
յափշտակեցեն օտարքն...»,

դիմում է Յ. Շահամիրեանը հայ երիտասարդութեանը՝ ազատադրական պայքարի կոչ անելով նրանց.

«Ուստի լաւ համարին անպարտելի եւ ախոյեան մարտիկքն
մի անդամ մեռանիլ նահատակութեամբ,

74. Կ. Ա. Դանիէլեան, Հայ մեմուարական գրականութեան պատմութիւնից, Երեւան, 1961, էջ 108–109, 114:
75. Նոր տետրակ որ կոչի Յորդորակ, Մադրաս, 1779, էջ 181–182:

© National Library of Armenia

Քան յաւուրն հազար անդամ ի թշնամեաց մեռանիլ
արհամարհանօք եւ անել թախծութեամբ»[76]:

Ազգային ինքնաճանաչման նոյն կոչը մեզ ծանօթ է նաեւ Պ. Դպրի, Ղ. Զահկեցու, Պ. Ղափանցու եւ այլոց՝ ազգին, հայրենիքին, ժողովրդին նուիրուած երգերից.

«Ըղքեզ ծանի՛ր
Լուսոյ նմանի՛ր
Փոյթ մի՛ բանիր»[77],

թախանձում է Պ. Ղափանցին իր ժողովրդին:

«Մոլականս ըղդաստացո՛,
Արա՛ բանական»[78],

բացագանչում է Պաղտասար Դպիրը:

«Զարթո՛ զաչս իմ, զիմացական հայելիս,
առ իմանալ զտգեղութիւնս,
եւ ճանաչել զչարի իմոյ անձին»[79]:

գրում է նոյն դարի նշանաւոր բանաստեղծ եւ անյաղթադէտ Պետրոս Նախիջեւանցին:

ԺԸ դարի բանաստեղծութեան վրայ Դ. Անյաղթի ուսմունքի ազդեցութիւնը բացատրւում է նաեւ նրանով, որ բազմաթիւ նշանաւոր բանաստեղծ–գործիչներ միաժամանակ զբաղւում են զիտական, փիլիսոփայական, տեսական հարցերով, գրում են ինքնուրոյն եւ մեկնողական բազմաբնոյթ երկեր, որոնց վրայ՝ տարբեր չափով ու տարբեր դիրքերից՝ դարձեալ զգալի է Դ. Անյաղթի ազդեցութիւնը: Այս առումով Դ. Անյաղթի ժառանգութեան հետ յարակցուող վերեւում յիշուած, ինքնուրոյն եւ մեկնողական երկերի հետ միասին՝ Ի. Էրզրումեցու, Մ. Սեբաստացու, Պ. Դպրի, Մ. Գանձակեցու, Յ. Նալեանի, Ս. Երեւանցու, Ղ. Զահկեցու, Պ. Նախիջեւանցու, Յովսէփ Էմինի, Շահամիրեանների, Յ. Շմաւոնեանի, Թ. Զուղայեցու եւ այլոց համապատասխան երկերի հանգամանալից ուսումնասիրութիւնը (նոր ժամանակների լուսաւորական ընդհանուր շարժման եւ հայոց անցեալի դասական զիտութեան ու մշակոյթի հետ ունեցած կապի մէջ), տեսանելի կը դարձնի վերոյիշեալ գործիչների հայեացքների ընդհանուր այն կէտերը՝ որոնք միացնում են նրանց, եւ տարբերիչ այն գծերը՝ որոնք նրանց բաժանում են միմեանցից իբրեւ հայ հասարակական միտքը շարժող տարբեր հոսանքների ներկայացուցիչների:

Այս ճանապարհով կը գծագրուի նրանցից իւրաքանչիւրի զիտական–փիլիսոփայական զիմապատկերը եւ կ'ամբողջացուի ԺԸ դարի հայ փիլիսոփայական մտքի պատմութիւնը:

Երեւան, 1980

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐԵԱՆ

Բանասիրական գիտութիւնների
դոկտոր

76. Նոյն տեղում, էջ 8, 35:
77. ՊԵՏՐՈՍ ՂԱՓԱՆՑԻ, անդ, էջ 233:
78. ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղարան փոքրիկ, 1768, էջ 51:
79. *Մատենադարան*, ձեռ. թ. 10, թերթ 34ա:

Résumé

DAWIT' ANYAŁT' (L'INVINCIBLE)
ET LA LITTÉRATURE ARTISTIQUE ARMÉNIENNE
DU MOYEN ÂGE
(Aperçu)

CHOUCHANIK NAZARIAN
(Erévan)

L'A. part de la constatation que dans la poésie religieuse de l'Arménie au Moyen Age, avant même Yovhannēs Sarkawag, considéré comme l'un des protagonistes de l'introduction de l'élément «rationnel» dans la poésie religieuse, il existe toute une série de tropaires et de chants spirituels où le sentiment de la réalité concrète de l'homme, dans ses dimensions sociales et immanentes, est présent côte à côte des sentiments inspirés par la foi dans la révélation. L'expression la plus profonde de cette tendance à insérer dans le cadre de l'inspiration religieuse une conception esthétique de la rationnalité, nous la trouvons dans la lyrique puissante de Grigor de Narek. En fait, l'œuvre de Narekac'i se présente comme la traduction en termes lyriques de l'idée fondamentale de la philosophie de Dawit': l'imitation de

© National Library of Armenia

Dieu par l'homme comme l'achèvement de toute la philosophie. Cette idée, que Dawit' héritait de la philosophie néo-platonicienne, était intimement liée dans la tradition chrétienne à celle de la «divinisation» de l'homme par l'œuvre du Christ et à travers son imitation.

L'A. considère ensuite quelques uns des principaux représentants de la littérature cultivée du Moyen Age, comme les catholicoi Nersēs Šnorhali et Grigor Tłay, pour vérifier, sourtout dans leur poésie, les références à Dawit'. Aussi l'attention de l'A. est attirée par la poésie didactique dont N. Šnorhali fut l'un des plus éminents culteurs en Arménie. Après lui et sur ses traces, à part Grigor Tłay déjà mentionné, fleurissent des poètes didactiques de valeur, tels que Movsēs Erznkac'i, disciple de Gēorg Skewrac'i, Smbat le Connétable, et plus tard, au XVIIIe siècle, au moment de la Renaissance arménienne, Xač'atur Erzrumec'i, Pałtasar Dpir, Mesrop Ganjakec'i, Petros Łap'anc'i, Petros Naxijewanc'i, Simēon Erewanc'i et d'autres, dont les œuvres sont pleines de références explicites ou implicites aux écrits et à l'enseignement de Dawit'.

L'A. consacre une attention particulière aux traditions et aux légendes, dont quelques unes faisant partie du patrimoine de la culture populaire, relatives à Dawit', ainsi qu'à Movsēs Xorenac'i qui fut, selon la tradition, son compagnon d'études à Athènes. L'appellatif d'Invincible et les récits sur les discussions soutenues par Dawit' avec les philosophes grecs, d'où il sort toujours victorieux, sont un écho précieux du haut prestige dont jouissait le philosophe arménien.

Dans la deuxième partie de son étude l'A. s'arrête surtout sur la figure de Xač'atur Erzrumec'i ou Karnec'i, surnommé aussi Arak'elean, qui cultiva une poésie didactique aux plus amples dimensions, en traduisant en vers presque tout le savoir classique transmis par le Moyen Age, sans rester insensible aux suggestions de «l'illuminisme bourgeois». Ayant fait encore quelques allusions à la littérature exégétique autour du corpus dawit'ien, l'A. conclut cette ample revue sur la littérature didactique en Arménie, en soulignant certaines influences que l'œuvre de Dawit', et surtout la tradition éthico-philosophique qui se rattache à lui, ont pu exercer sur la pensée naissante de la libération arménienne au XVIIIe siècle.

ԻՆՏՐԱՅԻ «ՆՈՃԱՍՏԱՆ»Ը*

«Ներաշխարհ»էն անցքը դէպի «Նոճաստան»ը[1], անցնիլ մըն է տիեզերքի անսահման շրջածիրէն՝ մեռելական իրականութեան մը, տիեզերական համանուագէ մը՝ մահաշունչ եղերերգի, բղխած նոճիներու աստանդական տատանումներէն՝ արդիւնք հովին բռնութեան։ Ինտրա կ'ունկնդրէ այդ մահերգը զգալով անոր սարսուռը, որ կարծես հեւքն է նոճիներու թխորակ միայնութեան, ու այսպէս կը հաղորդակցի գոյութեան եւ մահուան խորհուրդներուն, դժբախտաբար առանց թափանցելու անոնց էութեան մէջ։ Կը զգայ ինքզինքը սոսկ մարդ մը, նետուած այս հողոտ երկրի վրայ՝ փնտռելու համար նը-պատակ մը, որ միշտ կը խուսափի իրմէ. կեանքն ալ իր վաղանցկութեամբ որեւէ փայփայող գաղափարական չի պարգեւեր։ «Ներաշխարհ»ին մէջ անսահման հորիզոններ կը յայտնուէին հեղինակին բոցանշոյլ լոյսով, հիմա նոճիներու պուրակի մը սահմանափակ յուշարձանն է, ուր կ'ամփոփուի բնութիւնը եւ մարդկային միտքը. բայց նոյնքան սիրելի կը դառնայ քերթողին՝ որքան Սեւ Ծովի անեզրութիւնը. որովհետեւ նոճաստանի ծառերը կ'ըլլան իր մէջ ստեղծողը նոր տրամադրութիւններու եւ հոգեվիճակի, ծնունդ տալով բանաստեղծական նոր աշխարհի մը։ Ինքը հոն կը փնտռէ տարբեր զգացումներ, զգացողական նորութիւններ ու պատկերացումներ՝ անոնցմով լիանալու եւ ոգեւորուելու։

*) Յետ մահու հրատարակուող այս յօդուածը գտնուած է Հ. Կ. Քիպարեանի թղթածրարներուն մէջ։ Զայն մամուլի կը յանձնենք նոյնութեամբ ինչպէս որ գտած ենք իր վերջին խմբագրութեամբ, որու նախընթաց հանդրուաններու նախարտակներն ալ հեղինակը պահեր է։ Թէեւ որեւէ ցուցմունք չունինք գրութեան թուականի մասին, կը խորհինք որ շարադրուած ըլլայ հեղինակին Ինտրայի «Ներաշխարհը» ուսումնասիրութենէն ետք (Տե՛ս «Բազմավէպ» ՃԸ (1972), էջ 431–443), եւ անշուշտ ոչ շատ ուշ Վ. Կիրակոսեանի «Ինտրայի ստեղծագործութեան գրապատմական արժէքը» յօդուածին երեւումէն («Բանբեր Երեւանի Համալսարանի», 1972, թ. 3, էջ 211–214), որուն կ'ակնարկուի այստեղ։ Կարելի է ուրեմն ներկայ յօդուածին գրառումը դնել 1973–74ի ընթացքին։

1. ԻՆՏՐԱ, Նոճաստան, Կ. Պոլիս, հրտ. Յ. Մատթէոսեան, 1908, էջք 46։

© National Library of Armenia